12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 181(4799)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Իր լարած ծուղակն է ընկել

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ի՞նչ հաշվարկ ուներ Իլհամ Ալիեւը, երբ Կազանի հանդիպմանը «մոտ մեկ տասնյակ նոր առաջարկություններ» ներկայացրեց եւ փաստորեն տապալեց Դմիտրի Մեդվեդեւի միջնորդական ջանքերը: Հարցին իհարկե միանշանակ պատասխանել հնարավոր չէ: Կարելի է միայն ենթադրել: Նա հավանաբար սպասում էր, որ ֆրանսիական «Տոտալ» ընկերության հայտնաբերած բնական գազի նոր հանքավայրը չափազանց կկարեւորվի Եվրոմիության կողմից: Այնքան, որ վերջինս «Հայաստանին կստիպի ընդունել նոր առաջարկությունները»:

Ադրբեջանական կողմը, համենայն դեպս, սպասում էր, որ Ֆրանսիայի նախագահը հարավկովկասյան շրջայցի ժամանակ կհնչեցնի «նոր գաղափարներ»: Սարկոզին, մինչդեռ, ըստ էության կրկնեց այն, ինչ վաղուց ասել էին համանախագահ երկրների առաջնորդները: Ըստ երեւույթին, դա սառը ցնցուղ էր Իլհամ Ալիեւի ոգեւորությանը: Իր հերթին ռուսաստանյան կողմն էլ որոշակիորեն «վրեժխնդիր եղավ». ավելի վաղ անոնսավորվել էր, որ Բաքվում «Միջազգային հումանիտար ֆորումին» ներկա կգտնվի Դմիտրի Մեդվեդեւը, սակայն նրա փոխարեն Ռուսաստանը ներկայացրեց նախագահի աշխատակազմի ղեկավար Նարիշկինը:

Այս իրավիճակում «Թրենդ» գործակալությունը, հղում անելով վաշինգտոնյան «անանուն աղբյուրին», տեղեկացրել է, որ Սարկոզին «ներկայացրել է նոր առաջարկություններ, որոնք համաձայնեցված են Միացյալ Նահանգների հետ»: Գործակալության մատուցմամբ, «մոտ ժամանակներս Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները կարող են հանդիպել Փարիզում»:

Ընդհանուր համապատկերի վրա «Թրենդի» տեղեկությունն այնքան արտառոց է, որ «Զերկալո»-ի մեկնաբանը մի ծավալուն վերլուծություն է արել եւ եկել այն եզրահանգման, թե «ամեն ինչ հավանաբար կմնա այնպես, ինչպես կա»: Թերեւս դա իրականության բավականին անաչառ ընկալում է, ինչը, որքան էլ տարօրինակ հնչի, շտապեց հաստատել Ադրբեջանի ԱԳՆ-ի մի պատասխանատու աշխատակից:

Տես էջ 8

# Հայ «ոսկե քսակը»՝ «ոսկե գրիչի» կողքին

**Ամեն տարի հոկտեմբերի առաջին կեսին Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը Երեւանում անցկացվող օրերի ընթացքում հրապարակում են այն մրցանակակիրների անունները, որոնք հաղթող են ճանաչվում հանրապետության, արդեն նաեւ՝ հայության գիտության, մշակույթի եւ լրագրության ոլորտներում Միության անցկացրած ավանդական ամենամյա մրցույթներում:**

**2011-ի մրցանակաբաշխությունը, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին, եւ որի գլխավոր հերոսը երիտասարդ գիտնականը, ստեղծագործողն է, տեղի ունեցավ երեկ Գիտությունների ազգային ակադեմիայի դահլիճում: Շեշտելով, որ «Հայերի համաշխարհային կոնգրեսը ոչ մի ձեռնարկ չի իրականացնում առանց սփյուռքի նախարարության հետ համագործակցության, ինչը պետություն-հասարակական կազմակերպություն գործակցության լավագույն օրինակն է, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը հատկապես կարեւորեց ՀՀԿ-ի եւ ՌՀՄ-ի դերը հանրապետության գիտության ու ստեղծագործական կյանքում. «Միայն հայ գիտությանն ու ստեղծագործ մարդուն իրական նվիրյալը կարող է իրեն նման նախաձեռնություն թույլ տալ», շեշտեց նախարար Հակոբյանը: Իր հերթին Համաշխարհային հայկական կոնգրեսի ու Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, իր գլխավորած կազմակերպությունների համար մեծ պատիվ համարելով տասնամյա համագործակցությունը Գիտությունների ազգային ակադեմիայի հետ, ասաց. «Գիտությունն այսօր երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը բարելավելու լավագույն մեխանիզմն է»:**




**Այդ մեխանիզմի ներկայացուցիչ, 21-ամյա ֆիզիկոս Հայկ Իշխանյանը ստացավ առաջին մրցանակը՝ «Հատուկ մրցանակը», որպես գիտության ոլորտում մրցանակաբաշխության ամենակրտսեր մասնակից: Արդեն յոթ-ութ գիտական աշխատությունների հեղինակ 21-ամյա ֆիզիկոսի փոխարեն մրցանակը ստացավ եղբայրը, քանի որ նա այս պահին սեմինարների է: Արվեստ, լեզու եւ գրականություն ոլորտում մրցանակի արժանացավ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ներկայացնող Տաթեւիկ Շախկուլյանը: Հայագիտություն եւ ազգագրություն ոլորտում մրցանակակիրը Անահիտ Մենեմշյանն է, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետից: «Պատմության» մրցանակը բաժին հասավ կրկին ԵՊՀ-ից Արման Եղիազարյանին: Արեւելագիտության մրցանակը կիսվեց Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը եւ պաշտպանության նախարարությունը ներկայացնող Վահրամ Տեր-Մաթեւոսյանի եւ ԵՊՀ-ից թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի միջեւ: Սոցիոլոգիա ոլորտում ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտից Էմիլ Օրդուխանյանը մրցանակակիր դարձավ, իսկ տնտեսագիտության ոլորտում՝ Անահիտ Մանասյանը, Այ Էյ Բի Էյ հայ-բրիտանական կրթական կենտրոնից: Հայկ Սուքիասյանը՝ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլագիայի եւ իրավունքի ինստիտուտից, ստացավ քաղաքագիտության եւ իրավագիտության ոլորտի մրցանակը, իսկ ֆիմիայի ոլորտում մրցանակակիրը՝ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտը ներկայացնող Խաչատուր Մանուկյանն է:**

Տես էջ 2

# Ստամբուլում թուրք վարորդը դաժան ծեծել է մի կնոջ

*Իմանալով, որ նա հայ է*

Նախորդ օրը Ստամբուլի «Զինջիրլիքույու» գերեզմանոցի մոտակայքում դաժան ծեծի է ենթարկվել մի կին այն պատճառով, որ հայ է: Ծեծողը տաքսու վարորդ է: Համարելով այս միջադեպը ատելության դրսեւորում, «Կանգ առ, ռասիզմ» շարժումը միջադեպի վրա է հրավիրում վարչապետ Էրդողանի կառավարության ուշադրությունը, պահանջելով գործողությունների համապարփակ ծրագրի մշակում:

Այս ամենի մասին նշված է այս շարժման պաշտոնական durde.org կայքէջում հրապարակված հաղորդագրության մեջ, որը վերարտադրել է Ստամբուլի «Հայթերթ» կայքէջը: Հաղորդագրությամբ միջադեպի քննությանը հետամուտ լինելու վճռականություն է հայտնվում, զգուշացվում են ոստիկանությունն ու դատախազությունը, ապա հրապարակվում է տուժածի հարազատից ստացած նամակը, իհարկե առանց անուն նշելու:

Ահա թե ինչ է գրված. «Երեկ (հոկտեմբերի 10-ին) ժամը 14.30-ին տաքսու վարորդը քրոջս բռունցքի հարվածներ հասցնելուց հետո մազերից բռնել եւ նրան դուրս է շպրտել մեքենայից... Ինչո՞ւ, որովհետեւ քույրս քրիստոնյա է... Սկզբում նա հարցրել է. «Առոգանությունդ ճիշտ չէ. հրեա՞ ես, թե՞ հայ»: Երբ քույրս պատասխանել է, որ ինքը հայ է, ապա վարորդը սկսել է անպատվել մեր կրոնը, լեզուն է երկարացրել Աստվածաշնչին, այնուհետեւ բացականչել է. «Դու գյավուր ես... Դուք բոլորդ դատապարտված եք դժոխքում այրվելու»: Քույրս փորձել է հակադրվել, թե նա չի կարող իրեն գյավուր անվանել, որից հետո վարորդը շուռ է եկել, սկսել է բռունցքով հարվածել դեմքին, բացել է հոնքը, արյունլվիկ է արել դեմքը, ապա բռնելով մազերից՝ նրան մեքենայից դուրս է շպրտել»:

Միջադեպը մեկնաբանության կարիք չի զգում: Պարզապես մեկ անգամ եւս ցույց է տալիս, որ այս թուրք վարորդը՝ իսլամական թե ծայրահեղ ազգայնական, միեւնույն տականքն է, իսկ նրա արարքը՝ ոչ մահմեդականների նկատմամբ թուրքական դարավոր ավանդական անհանդուրժողականության մեր օրերի արձագանքը: Պարզապես չգիտենք, հայ լինելու համար արյունլվիկ անելով անպաշտպան կնոջ դեմքը՝ մարդկերպ այս տականքը ո՞ւմ օրինակին է հետեւում, 1915-ի ցեղասպանությանն անմիջականորեն սիրահոժար մասնակցած մարդասպան պապերի՞, թե՞ 1955-ի սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում պետականորեն կազմակերպված ջարդերի մասնակից թուրքական ընչաքաղց ոհմակի: Մնում է հուսալ, որ ծաղկող, բարգավաճող Թուրքիան կանդամակցի Եվրոմիությանը, որպեսզի այս վարորդի նման տականքներ փառաբանեն նրա ավանդակա՜ն հանդուրժողականությանը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Քոլեյնի. «Հայոց ցեղասպանությունը Դամոկլյան սուր է Թուրքիայի համար»

**Պատասխանելով Indiplomacy.ir կայքէջի հարցին, Հայաստանում Իրանի նախկին դեսպան, Իրանի արտգործնախարարությունում Կովկասի հարցերի պատասխանատու Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին մեկնաբանել է Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի Հայաստան այցը եւ հատկապես Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա հայտարարությունները: «Թուրքիան անհանգստացած է, ասել է նա: Եթե նա ճանաչի Հայոց ցեղասպանությունը, նոր պահանջների գործընթաց է սկսվելու: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի գլխին կախված Դամոկլյան սուր է»:**

**Իրանցի դիվանագետի կարծիքով, պաշտոնապես Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պարագայում Թուրքիան վախենում է հայերի տարածքային պահանջներից: Դա Հայոց ցեղասպանության գործընթացը տեղափոխելու է նոր հարթակ:**

**Նախկին դեսպանի համաձայն, ինչպես հաղորդում է անգլիական «Թայմսը», եվրոպական երկրները եւ հատկապես Ֆրանսիան Հայոց ցեղասպանության հարցը պահում են իբրեւ Թուրքիային ճնշելու միջոց:**

# Անդրանիկ Ալեքսանյանը՝ փոխնախարար

Վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Անդրանիկ Ալեքսանյանը երեկ նշանակվել է տրանսպորտի եւ կապի փոխնախարար: Անդրանիկ Ալեքսանյանը «Արմինկո» ընկերության հիմնադիրն ու ղեկավարն է եւ հայտնի անձ հեռահաղորդակցության ոլորտում, որի հիմնադրման ակունքներում է եղել դեռեւս 1990-ական թ.թ.-ից::

# «Թուրքերն ինձ արդեն ասում են»

*Ասել է նախագահ Սարկոզին ի պատասխան խորհրդականների զգուշացումների*

**Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի երկօրյա պետական այցը Հայաստան, նրա թուրքական իշխանություններին հասցեագրած պատմության հետ առերեսվելու կոչը, «Թուրքիան չի կարող անդամակցել Եվրոմիությանը» արտահայտությունն ու առավել եւս առերեսման համար մինչեւ տարեվերջ վերջնաժամկետ նշանակելը հավասարակշռությունից հանեցին Անկարային: Նրան նախ բուռն հակազդեցությամբ արձագանքեց արտգործնախարար Դավութօղլուն, թե գաղութատիրական անցյալ ունեցող Ֆրանսիայի նախագահը չի կարող դասեր տալ Թուրքիային՝ մանավանդ ցեղասպանության է ենթարկել 1,5 միլիոն ալժիրցիների, ապա Դավութօղլուին միացավ Եվրոմիության գործերով նախարար եւ գլխավոր բանակցող Բաղըշը:**



**Ի դեպ, վերջիններս, որքան էլ «հակաթուրքական» ելույթների համար դատապարտելու լինեին Նիկոլա Սարկոզիին, այնուամենայնիվ, հարկ համարեցին ընդգծել, որ Ֆրանսիայի նախագահի ելույթները ուղղված էին ոչ այնքան Թուրքիային, որքան ֆրանսահայերին, քանի որ առաջիկա գարնանը նախագահական ընտրություններ են նշանակված երկրում: Մինչդեռ 400-հազարանոց համայնքի ձայնը Ֆրանսիայում չի կարող որեւէ շոշափելի ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:**

**Համենայն դեպս հոկտեմբերի 10-ին նախագահ Սարկոզիի Հայաստան այցելությանը կայքէջում «Թուրքերն ինձ արդեն ասում են» վերնագրով անդրադարձել է նաեւ թուրքական NTV-ն: Անդրադարձը հենվում է ֆրանսական մամուլի հրապարակումների վրա, ըստ որոնց՝ խորհրդականներից ոմանք հանդգնում են զգուշացնել Նիկոլա Սարկոզիին. «Այդպես մի արեք, զայրացնելու եք Անկարային», իսկ նա պատասխանում է. «Խնդիր չէ, թուրքերն ինձ արդեն ասում են»:**

Հ. Չ.

ԱԶԳ

# Ընթացիկ

## ՌՀՄ-ՕԵԿ համատեղ քննարկում

1912 թվականի մարտի 4-ին տեղի ունենալիք ՌԴ նախագահական ընտրություններին 640 քաղաքում մասնաճյուղ ունեցող Ռուսաստանի հայերի միությունը պաշտպանելու է Վլադիմիր Պուտինի թեկնածությունը՝ կոչ անելով հայ համայնքներին իրենց քվեն տալ նրա օգտին: Այս մասին երեկ ասաց ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը Մոսկվայի տանը տեղի ունեցած Ռուսաստանի հայերի միության եւ ՕԵԿ-ի նախաձեռնած «Հայ-ռուսական ռազմավարական համագործակցություն» թեմայով համատեղ քննարկման ժամանակ: ՌՀՄ-ի եւ ՕԵԿ-ի նախագահներ **Արա Աբրահամյանը** եւ **Արթուր Բաղդասարյանն** իրենց ելույթներում ներկայացրին իրենց ղեկավարած կառույցների մոտեցումները հայ-ռուսական համագործակցության թեմայով, ինչպես նաեւ արածն ու անելիքը՝ ուրվագծելով զույգ կառույցների ծրագրերը եւ միանման մոտեցումները հարցերին:

«Հայաստանի անկախության 20 տարում հայ-ռուսական համագործակցությունն ավելի է ամրապնդվել, բոլոր ուղղություններով համարյա Հայաստանը կարողացել է աշխատել Ռուսաստանի հետ», այս գնահատականը հնչեցնելով՝ ԱԱԽ քարտուղար Ա. Բաղդասարյանը նաեւ բացատրեց, թե ինչո՞ւ է այս կարգի քննարկումը հատկապես ՌՀՄ-ի հետ կազմակերպվել. որովհետեւ ՌՀՄ-ն Ռուսաստանում ամենակարեւոր, ամենաազդեցիկ, մեծ հարգանք վայելող հանրային միությունն է՝ ներկայացված բոլոր մարզերում, բացի այդ՝ արդյունավետ գործունեություն է ծավալում նաեւ Հայաստանում, աջակցում գիտությանը, մշակույթին, կրթությանը, եւ անձամբ Արա Աբրահամյանը մեծ ներդրում է արել հայ-ռուսական գործակցությունը իրականացնելու գործընթացում: Ա. Բաղդասարյանը հիշեց 2010 թվականին կնքված հայ-ռուսական ռազմաքաղաքական 10 պայմանագրերը՝ նշելով, որ Հայաստանը միակ երկիրն է, որտեղ Ռուսաստանի սահմանապահ ծառայություն է գործում: Ապա նա նշեց Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների համագործակցությունը հատկապես վերջին այցի շրջանակում, որտեղ շատ կարեւոր համաձայնագրեր կնքվեցին ռուսական ռազմաբազայի ժամկետների երկարացման, ինչպես նաեւ այս ուղղությամբ գործակցության առաջնահերթությունների վերաբերյալ, որոնցով երկկողմանի ռազմական գործակցությունն, ըստ ԱԱԽ քարտուղարի, նոր մակարդակի է բարձրացվել: Նա հատկապես կարեւորեց Հայաստանում 7 համատեղ ռազմական ձեռնարկություններ ստեղծելու համաձայնագիրը: Բացի համաձայնագրերից՝ Հայաստանում ամեն տարի աշխատանքային պլաններ են կազմվում՝ տարվա կտրվածքով նախանշելով հայ-ռուսական համագործակցության աշխատանքները: Շուտով Հայաստանում ռուսական կապիտալ ներդրումները կգերազանցեն 1 մլրդ դոլարը, մեր երկրի գերակա ճյուղերում ներկայացված են այնպիսի ձեռնարկություններ, որոնց կապիտալի զգալի մասը ռուսական է: Մի խոսքով, ըստ Ա. Բաղդասարյանի, Հայաստանի քաղաքական ապագան սերտորեն կապվում է Ռուսաստանի հետ, մեր կապերն առավել պետք է խորացնենք՝ առանց հակադրելու այլ երկրների հետ հարաբերություններին, քանի որ 2,5 մլն հայ է ապրում Ռուսաստանում, այնպես որ այլ ճանապարհ չկա, քան կապերի ամրապնդումը:

Նա ներկայացրեց ՕԵԿ-ի պատկերացումները Ռուսաստանի հետ կապերի խորացման վերաբերյալ. նախ տնտեսական ոլորտում կապերը խորացնելու բազմաթիվ հնարավորություններ կան, Հայաստանի անվտանգության տեսակետից՝ ԵՄ, այլ երկրների հետ համագործակցությանը զուգահեռ՝ Ռուսաստանի հետ գործակցությունը պետք է ընդլայնել, երրորդ համագործակցության դաշտը մշակութայինն է, եւ ՌՀՄ-ի ջանքերին զուգահեռ այս բոլոր ոլորտներում պետության գործադրած ջանքերը եւս պետք է բազմապատկել:

Պատմելով Ռուսաստանի հայերի միության ծավալած աշխատանքների մասին՝ Արա Աբրահամյանը նշեց, որ Ռուսաստանը Հայաստանի ամենամոտիկ բարեկամն է, բայց տնտեսական համագործակցության ողջ ներուժը չի գործադրված: Հիշեց, թե ինչու ստեղծվեց ՌՀՄ-ն, քանի որ 1500 հայկական տարբեր կազմակերպությունները անուժ էին, հաճախ 2-3 մարդով, չէին կարողանում ազդեցություններ գործադրել, հայանպաստ պատգամավորների ընտրությանը նպաստել: ՌՀՄ-ն երբ ստեղծվեց, այդ կազմակերպություններից ով ասելիք ուներ՝ ընդգրկվեց նրա մեջ: Հիմա ՌՀՄ-ն մի այնպիսի կառույց է, որ բարձր գնահատանքի է արժանացել ՌԴ-ում, բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներն են գալիս ու ելույթ ունենում ՌՀՄ լսարանի առջեւ՝ նրա կարծիքն այդ մարդկանց համար կարեւոր է. «Առանց չափազանցության մենք առաջին շարքում ենք, ՌՀՄ-ն կայացած կառույց է», ասաց Ա. Աբրահամյանը՝ ՌՀՄ-ի խնդիրների մեջ նշելով հայ-ռուսական բարեկամությանը, երկու երկրների նախագահների ձեռնարկների իրականացմանը նպաստելը, Հայաստանի սոցիալ- մշակութային կյանքին մասնակցելը՝ անելով հնարավորություններին համապատասխան ամեն ինչ: Նա առանձնացրեց Հայաստանի ազգային ակադեմիայի, Գրողների միությանը նպաստող ծրագրերը, ասաց ՌՀՄ այն առաջարկի մասին, որով նախատեսվում է մշտական գործող տնտեսական ֆորում հիմնադրել Հայաստանում: Այս վերջինը պետք է նպաստի միջին բիզնեսի զարգացմանը՝ ուսումնասիրելով մարզերի հնարավորությունները: Նա դժգոհեց Ռուսաստանի կայքեր Հայաստանից թափանցող այն նյութերից, որոնք սեւացնում են պետությունը, իշխանություններին ու եկեղեցուն, առաջարկեց նաեւ Մտավորականների ակումբ ստեղծել՝ մտավորականները պետք է գաղափարներ տան պետությանը:

Ի դեմ, ե՛ւ Արա Աբրահամյանը, ե՛ւ Արթուր Բաղդասարյանը նշում էին իրենց ղեկավարած կառույցների միանման մոտեցումների մասին եւ հայ-ռուսական հարաբերությունների, եւ մի խումբ այլ հարցերի վերաբերյալ:

Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան խորհրդական **Սերգեյ Օվերչենկոն** նույնպես բարձր գնահատեց ՌՀՄ-ի դերը ինչպես Ռուսաստանի հայ համայնքի շրջանում, այնպես էլ ռուսական կյանքի տարբեր ոլորտներում ունեցած ազդեցության առումով, հայ-ռուսական համագործակցությունը բարձր մակարդակի անվանեց, հիշեց տնտեսական ճգնաժամի պիկին Ռուսաստանի ֆինանսական աջակցությունը Հայաստանին, գիտության ոլորտում համագործակցության մասին խոսեց ու մի քիչ էլ դժգոհեց մամուլից, որը, նրա կարծիքով, Հայաստանում ռուսաց լեզվի ուսուցման դեմ ավելի շատ է գրել, քան՝ կողմ:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Հանրապետական Էդ Ռոյսը՝ «Տարվա մարդ»

**Նոյեմբերի 26-ին «Յունիվերսալ Շերաթոն» հյուրանոցի դահլիճում կայանալիք տարեկան ճաշկերույթի ժամանակ «Տարվա մարդ» տիտղոսին է արժանանալու Մ. Նահանգների Հանրապետական կուսակցությունից կոնգրեսական Էդ Ռոյսը Հայ դատի հանդեպ ունեցած իր անսասան դիրքորոշման համար, տեղեկացնում է Ամերիկայի Հայ ազգային կոմիտեի արեւմտյան շրջանի մասնաճյուղից ստացված հաղորդագրությունը:**

**Հիշեցնենք, որ Էդ Ռոյսը դեմոկրատ Հովարդ Բերմանի հետ համահեղինակն էր անցյալ հուլիսի 20-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի քննարկմանը ներկայացված Թուրքիայում կրոնական ազատությունների վերաբերյալ թիվ 306 բանաձեւի, որն ընդունվեց ձայների 43-1 հարաբերությամբ: Բանաձեւով Թուրքիայից պահանջվում էր ազգային եւ կրոնական փոքրամասնություններին (այդ թվում՝ հայերին) պատկանող եկեղեցիների եւ եկեղեցական կալվածքների վերադարձ՝ իսկական տերերին եւ իրենց իրավունքներից ազատորեն օգտվելու հնարավորություն:**

**Էդ Ռոյսը 2010-ի փետրվարից համանախագահն է 140 ամերիկացի օրենսդիրներ ընդգրկող հայ-ամերիկյան հարցերով զբաղվող կոնգրեսական խմբակցության:**

Հ. Ծ.

## Լորիկ Չարխուդյանը՝ Մերիլենդի քաղխորհրդի անդամության թեկնածու

Տնտեսական զարգացման իր ուրույն քաղաքականությամբ եւ բնապահպանական լուրջ նախաձեռնություններով՝ Մասաչուսեթսի բնակիչ Լորիկ Չարխուդյանը իր թեկնածությունն է առաջադրել Մերիլենդում կայանալիք քաղխորհրդի անդամության առաջիկա ընտրություններում:

Լորիկը հասակ է առել քաղաքականությամբ ակտիվ զբաղվող ընտանիքում: Հայրը՝ Լեւոն Չարխուդյանը, Մասաչուսեթսի հանրային գործերի վարչության ներկայացուցիչ էր, իսկ մայրը՝ Բեթել Բիլեզիկյան-Չարխուդյանը, 1960-ականներից ակտիվ գործունեություն է ծավալել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Ներկայումս «Նյուտոն այգիների եւ հանգստի վայրերի» վարչության անդամ է: Ինքը՝ Լորիկը, տնտեսագիտության գծով դոկտորական է պաշտպանել Ջոն Հոպկինսի համալսարանում: Կողմնակից է տեղական ճաշատեսակներին զարկ տալու քաղաքականությանը: Ամուսնացած է, ունի 2 զավակ:

Հ. Ծ.

***ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ***

## Հայ «ոսկե քակը»՝ «ոսկե գրիչի» կողքին

*1-ին էջից*

**Երկրաբանության ոլորտից՝ Ջոն Կարապետյանը՝ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի եւ ինժեներային սեյսմաբանության ինստիտուտից, արժանացավ մրցանակի, նմանապես պարգեւը կենսաբանություն ոլորտում կիսվեց Քրիստինե Փիրումյանի (ԵՊՀ, կենսաֆիզիկայի բաժին) եւ Լիլիթ Գաբրիելյանի (ԵՊՀ) միջեւ: Տեխնիկական գիտությունների ոլորտում մրցանակակիրը կրկին մայր բուհից՝ Հայկ Խաչատրյանն է, իսկ ֆիզիկայից մրցանակ ստացավ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը ներկայացնող Դավիթ Հայրապետյանը: Ինֆորմատիկայի մրցանակը նույնպես կիսվեց՝ ԵՊՀ-ից Հայկ Գրիգորյանի եւ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտից Հրաչյա Ասցատրյանի միջեւ: ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտից Սմբատ Գոգյանը մաթեմատիկա եւ մեխանիկա ոլորտում մրցանակակիր է:**

**Ժուռնալիստական մրցույթի հանձնաժողովը մրցութային ծրագրում ընդգրկել էր նաեւ սփյուռքը ներկայացնող ԶԼՄ-ներ ու լրագրողների: Պարբերական մամուլ անվանակարգում մրցանակակիր է դարձել «Ավանգարդ» թերթը՝ հայ երիտասարդության առաջնահերթություններին ու խնդիրներին, Հայաստանի կայացմանը նվիրված հրապարակումների համար: «Սնդավում», «Այսօրվա ու վաղվա քսան տարեկաններին» հոդվածաշարի համար մրցանակակիր դարձավ նաեւ Գրիգոր Ջանիկյանը: Կրթությանը, երիտասարդության հիմնախնդիրներին ու դաստիարակությանը միտված ձեռնարկների լուսաբանման համար մրցանակ ստացավ «Կրթություն» թերթի խմբագիր Գագիկ Մինասյանը: «Հեռուստահաղորդումներ» անվանակարգում մրցանակները շնորհվեցին՝ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Հայ մայրիկ» ծրագրին, «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերությանը՝ «Երիտասարդական հայացք» հաղորդման համար, եւ «Շանթ» հեռուստաընկերությունից Արտյոմ Երկանյանին՝ «Աշխարհի հայերը» հաղորդման համար: «Ռադիոհաղորդումներ» անվանակարգում մրցանակներ ստացան՝ «Իմպուլս» ռադիոկայանը՝ երիտասարդության հիմնահարցերին, գործունեությանը նվիրված հաղորդումների համար եւ Հանրային ռադիոյի «Կամուրջ» ծրագիրը՝ Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների ամրապնդմանը, Ռուսաստանում ապրող հայերին հայրենիքի հետ կապելու կարեւոր գործում հայրենանվեր աշխատանքի համար: «Ինչ հրաշալի մարդ է Ագապին» եւ «Երկկենցաղ մարդը» հոդվածների համար «Մարզային ԶԼՄ-ներ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Գեղարքունիքի մարզի «Սեւան» թերթը: Իսկ «Սփյուռքահայ մամուլ» անվանակարգում մրցանակակիրը «Որեր» անկախ ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանն է, որը նաեւ «Ազգ» օրաթերթի Պրահայի թղթակիցն է: Ասատրյանը մրցանակ ստացավ՝ սփյուռքի ու հայրենիքի երիտասարդությանը հուզող խնդիրներին, նրանց համագործակցությանը նվիրված հրապարակումների համար:**

**Կերպարվեստի բնագավառում մրցանակաբաշխությունը երեք ոլորտ ուներ՝ գեղանկար, քանդակ եւ գրաֆիկա: Գեղանկարից մրցանակակիրներն են Արթուր Հովհաննիսյանը, Սուրեն Սաֆարյանը, Գարիկ Հարությունյանը եւ Արամազդ Պետրոսյանը: Քանդակից՝ Հարություն Կարապետյանը, Անդրանիկ Բաղդասարյանը, Հայկ Պետրոսյանը եւ Մելիք Շահնազարյանը, որը սեփական գործերից մեկը նվիրեց Արա Աբրահամյանին: Ջառա Գասպարյանն ու Հասմիկ Մանուկյանը՝ գրաֆիկայի մրցանակակիրներն են:**

**ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը վստահություն հայտնեց, որ այս ավանդույթ դարձած նախաձեռնությունը անպայման շարունակական է լինելու՝ ներառելով ավելի ու ավելի շատ բնագավառներ՝ գիտության ու մշակույթի ոլորտներում: Շնորհակալական խոսքում թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը, հիշեցնելով Նժդեհի հայտնի խոսքերը՝ դարձնելով այսօրվա իրականություն, ասաց. «Այսօր պետք է տեսնենք, որ հայ «ոսկե քակը» հայ «ոսկե գրիչի» կողքին է, շնորհակալություն»:**

Հ. Ա.




*Արա Աբրահամյանը մրցանակ է հանձնում Հակոբ Ասատրյանին:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# ԵԽԽՎ-ն լոբբիստական գործունեության վա՞յր է դարձել



ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամները, վերադառնալով հոկտեմբերի 3-7-ը տեղի ունեցած ԵԽԽՎ նստաշրջանից, երեկ պատմեցին նիստի հայկական թեմաների մասին: Սակայն նախ պատմենք ԵԽԽՎ-ի պատվիրակության եւ ՀԱԿ-ի հետ երկխոսող աշխատանքային խմբի ղեկավար Դավիթ Հարությունյանի անդրադարձի մասին՝ ՀԱԿ-իշխանություն երկխոսության վերաբերյալ լրագրողների (այդ թվում՝ «**Ազգի**») հարցերին: Ըստ նրա՝ երկխոսությունը հնարավոր կլինի շարունակել այն դեպքում, երբ ՀԱԿ-ը ողջամիտ կգնահատի իրավիճակը եւ պատրաստ կլինի երկխոսության, իսկ մոտակա օրերին երկխոսությունը շարունակել հնարավոր չէ: Նա նշեց, որ իշխանական կողմը պատրաստ է երկխոսության, բայց չի խնդրի ընդդիմությունից դրա վերսկսումը, եւ այն կսկսվի միայն այն դեպքում, եթե ՀԱԿ-ը նույնպես պատրաստ լինի բովանդակային երկխոսության, նա է ընդհատել երկխոսությունը, ՀԱԿ-ի անդամներն էլ շեղվել են երկխոսության բուն բովանդակությունից՝ մի պահ փորձելով երկխոսությունն օգտագործել զուտ քաղաքական, այժմեական եւ ընտրազանգվածի մոտ քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակներով: Մինչդեռ, ըստ Հարությունյանի, երկխոսությունն ինքնանպատակ չէ, եւ ոչ թե պետք է ՀԱԿ-ին կամ իշխանությանը, այլ՝ երկրին:

Վերադառնալով բուն ասուլիսին, նշենք, որ անցած երկուշաբթի, ԵԽԽՎ նստաշրջանի առաջին օրը, տեղի է ունեցել 1416 բանաձեւի շրջանակում գործող ԼՂ հարցով ենթահանձնաժողովի նիստը, որը մերոնք բոյկոտել են, իսկ ադրբեջանական պատվիրակությունն այդ չմասնակցելը փորձել է ներկայացնել որպես բյուրոյի որոշումների չկատարում՝ հավասարության նշաններ փորձելով դնել բյուրոյի մեկ այլ որոշման հետ այն մասին, որ ԵԽԽՎ զեկուցողը պետք է Ադրբեջան ուղեւորվեր քաղբանտարկյալների վերաբերյալ զեկույց պատրաստելու համար: Ադրբեջանը, սակայն, մերժել էր զեկուցողի մուտքը: Դ. Հարությունյանը ելույթ է ունեցել եւ կրկին ներկայացրել ենթահանձնաժողովի վերաբերյալ հայկական դիրքորոշումը՝ այն երկու պատվիրակությունների միջեւ փոխադարձ վստահությանը չի կարող նպաստել եւ իր բուն առաքելությունը չի կարող կատարել:

Մյուս կարեւոր հարցը Ջոն Պրեսկոտի եւ Աքսել Ֆիշերի զեկույցի հիմքով ընդունված բանաձեւն էր («**Ազգը**» մանրամասն գրել է ԵԽԽՎ-ի հայկական թեմաների մասին)՝ «Հայաստանում ժողովրդավարական զարգացումների մասին»: Ըստ ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանի, համեմատած նախորդ այդպիսի բանաձեւերի հետ, այս մեկն ընդհանուր առմամբ դրական է, Հայաստանի քաղաքական կյանքի ճշգրիտ գնահատականներով, ընդ որում՝ այնտեղ մտահոգություններ նույնպես կան: Ճիշտ է բանաձեւով մարտի 1-ի էջը փակված է համարվել (սա վատ արձագանք ունեցավ Հայաստանի ընդդիմադիրների կողմից), սակայն նաեւ մարտի 1-ի զոհերի մահվան հանգամանքների բացահայտումը մշտադիտարկման տակ պահելու անհրաժեշտության մասին եւս նշված է բանաձեւում: Ելույթ ունենալով նստաշրջանում՝ Ն. Զոհրաբյանը Հայաստանի առաջիկա երկու ընտրությունները ժողովրդավարության տեսակետից փորձաքար է անվանել, իսկ բարեփոխված ընտրական օրենսգրքի կիրառումն ապահովելը՝ քաղաքական կամքի դրսեւորում:

Երեկ առաջին անգամ վերջին շրջանում «Ժառանգությունից» ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ Զարուհի Փոստանջյանը միասնական ասուլիսին մասնակցեց: Նա եւ Արմեն Ռուստամյանը 5 առաջարկ են ներկայացրել բանաձեւի վերաբերյալ, դրանցից երեքն են ընդունվել՝ բանաձեւի կետերն առավել փոխզիջումային դարձնելով: Մարտի 1-ի էջը փակված չհամարելու վերաբերյալ նրանց առաջարկը չի ընդունվել, բայց նրանց առաջարկի ազդեցությամբ է նշվել զոհերի մահվան հանգամանքների բացահայտման մոնիթորինգի կետը:

Հայաստանի (եւ այլ երկրների եւս) վերաբերյալ մի ուրիշ հարց է եղել Դորիս Ստամպի զեկույցով առաջարկվածը՝ մինչեւ երեխայի ծնունդը սեռը որոշելու վերաբերյալ, որի դեպքում ծնունդների հարաբերակցությունը հօգուտ արական սեռի է: Այդ առթիվ ԵԽԽՎ-ում ելույթ ունեցած Արմեն Մելիքյանը նշել է, թե խնդիրը սխալ է ձեւակերպվել, քանի որ այն ավելի շատ պետք է հղիության արհեստական ընդհատմանը վերաբերեր եւ ոչ թե սելեկցիային:

Դ. Հարությունյանի խոսքով՝ ԵԽԽՎ անլրջության մասին վկայող «Ազգային իշխանությունը եւ պետականությունը ժամանակակից իրավունքում, հստակեցում» զեկույցին Հայաստանի պատվիրակությունը դեմ է քվեարկել՝ «ծույլ, թույլ, հակասական» զեկույց է եղել, մինչ այդ մերոնք այդ փաստաթղթի վերաբերյալ 16 առաջարկ էին ներկայացրել, բայց միայն երեքն են ընդունվել:

Զ. Փոստանջյանը ԵԽԽՎ-ում շրջանառության մեջ է դրել ԼՂ անկախության 20-ամյակի վերաբերյալ մի փաստաթուղթ, որով փաստորեն ԼՂՀ անկախության ճանաչումն է փաստվում եւ Եվրոպային էլ կոչ է արվում կապեր հաստատել ԼՂՀ իշխանությունների հետ, այդ փաստաթղթի տակ 32 ԵԽԽՎ-ական է ստորագրել (7-ը հայ պատվիրակներն են): Մի ուրիշ փաստաթուղթ էլ մեր պատվիրակությունն է շրջանառություն մտցրել՝ ԵԽԽՎ բյուրոյի կանոնակարգը փոխելու եւ շահերի բախման բացահայտման մեխանիզմներ կիրառելու վերաբերյալ, այլապես՝ ԵԽԽՎ-ն ժողովրդավարական արժեքներ կրող կազմակերպությունից կամաց-կամաց դառնում է շահերի կազմակերպություն: Չնայած ԵԽԽՎ-ն նախագահելու Մեւլութ Չավուշօղլուի ժամկետն ավարտվում է. «Առնվազն զավեշտ է, որ ժողովրդավարության հարցերով զբաղվող կառույցում զբաղվում են լոբբիստական գործունեությամբ: ԵԽԽՎ-ում էլ զայրացած են նման վիճակից եւ բազմիցս բարձրաձայնել են լոբբիստական գործունեության անթույլատրելիության հարցը», ասաց Դ. Հարությունյանը:

Հունվարից ԵԽԽՎ նախագահությունը կստանձնի ֆրանսիացի Ժան Կլոդ Մինյոնը, որն, ի դեպ, Ն. Զոհրաբյանի հավաստմամբ, խոստացել է ընթացք չտալ ԼՂ հարցով ենթահանձնաժողովին. այդ մասին նա ակնարկել է Ստրասբուրգի «Ռից» հյուրանոցում, իր եւ Արմեն Ռուստամյանի հետ հանդիպման ընթացքում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

---

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

# Չավուշօղլուի «կարապի երգը»

**Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հատուկ հանձնաժողովը, որ տարիներ առաջ ստեղծվեց զբաղվելու ղարաբաղյան խնդրին առնչվող հարցերով, հանձնաժողովում նախագահող լորդ Ռասսել Ջոնստոնից հետո դադարեց որեւէ կենդանություն դրսեւորել:**

**Իսկ ԵԽԽՎ ներկայիս նախագահ Մեւլութ Չավուշօղլուն, որի լիազորությունների ժամկետն ավարտվում է հունվարին, այդպես էլ չցանկացավ ընդունել, որ հենց իր անձնական նախաձեռնությամբ ու, կարելի է ասել, նաեւ անձնական ցանկությամբ փորձեր արվեցին կենդանություն տալու իրական ոչ մի նպատակի ծառայելու հնարավորություն չունեցող հանձնաժողովին այնպիսի կազմով ու նախագահությամբ, ինչպիսին ունի հիմա:**

**Այդուհանդերձ, բոլոր հնարավորություններն օգտագործած ու այդպես էլ բավարարում չստացած Չավուշօղլուն կարծես վերջին փորձեր է անում ինչ-որ բան, ինչ-որ արդյունք, ինչ-որ ազդեցություն ստանալու հատուկ հանձնաժողովի չգոյությունից: Բաքվում տեղի ունեցած համաժողովներից մեկին օրերս մասնակցած ԵԽԽՎ թուրք նախագահը լրագրողներին հայտարարել է, թե հատուկ հանձնաժողովը շուտով զեկույց է ներկայացնելու, թե ինչպես նվազեցնել «մարդու իրավունքների ոտնահարումը ղարաբաղյան հիմնախնդրում»:**

**Ակնհայտորեն, այնպիսի հանձնաժողովի պարագայում, որի աշխատանքները բոյկոտել է ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակությունը, չի կարող որեւէ զեկույց հրապարակել, որ ընդունելի լինի՝ թեկուզ հավասարակշռված ներկայացված կողմերի առումով: Այսինքն՝ հանձնաժողովի անունից պատրաստվելիք զեկույցը Չավուշօղլուի վերջին փորձն է հետք թողնելու մի հարցում, որ վերաբերում է ղարաբաղյան խնդրին ու կարող է ազդեցություն ունենալ խորհրդարանական վեհաժողովում հարցի որեւէ ձեւաչափով քննարկումներում:**

**Մյուս կողմից, խիստ կասկածելի է հանձնաժողովի շարունակականությունը, երբ ԵԽԽՎ-ում նոր նախագահ կընտրվի՝ ու թուրքական գերակայությունը՝ ի դեմս Չավուշօղլուի, այլեւս տեղ չի գտնի բարձր մակարդակով կայացվող որոշումներում:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

---

# 32-ի ստորագրությունը, 10 ֆրանսիացիները եւ ադրբեջանցիների «զոհ» Տոդորովիչը

**ԵԽԽՎ-ն իր վերջին նստաշրջանում ընդունել է գրավոր հայտարարություն, որով «ճանաչվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ կոչ է արվում Եվրոպային՝ ուղիղ երկխոսություն ծավալել Լեռնային Ղարաբաղի ընտրված իշխանությունների հետ»: Հայ վեհաժողովական Զարուհի Փոստանջյանի առաջարկությամբ այս հայտարարությունը ստորագրել են 32 վեհաժողովականներ, եւ այն չունի՝ իրավաբանական ուժ: Այդուհանդերձ իրադարձությունը ուշագրավ է, մանավանդ՝ դրա հնարավոր հետեւանքների համայնապատկերում: Բայց նախքան հետեւանքներին անդրադառնալը նկատենք, որ վերոհիշյալ հայտարարության տակ ամենաշատը «ֆրանսիական ստորագրություններն են», իսկ Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներից է, ավելին, այս հայտարարությունը հրապարակվեց այն ժամանակ, երբ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Երեւանում մեկուկես օր անցկացնելուց հետո այցելեց Բաքու՝ երկուուկես ժամով: Ընդ որում՝ ամենեւին էլ իր այցելությամբ չպատվելով Բաքվի «շեհիդների պուրակը»:**

**Փաստորեն Ադրբեջանում բոլորը, սկսած Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական ու հասարակական հարցերի վարչության պետ Ալի Հասանովից, ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակության անդամ, «խոստումնալից» ազգանունով Գանիրա Փաշաեւայից եւ «ազատ ու անկախ» Ադրբեջանի բոլոր «ազատ ու անկախ» վերլուծաբաններից, սկսեցին լրջորեն քննադատել Ֆրանսիայի նախագահին «Ադրբեջանը հրապարակավ նվաստացնելու մեջ»: Տիկին Փաշաեւայի հայտարարություններին մենք դեռ կանդրադառնանք, այժմ նշենք, որ տասը ֆրանսիացիների կողքին ԼՂՀ-ն ճանաչող հայտարարությունը ստորագրել է նաեւ սերբ Դրագան Տոդորովիչը: «Ընդ որում՝ Սերբիան այն երկիրն է, որը տարածքային ամբողջականության հետ կապված ավելի մեծ խնդիր ունի, քան Ադրբեջանը: Այնինչ Բաքուն մինչ օրս չի ճանաչել Կոսովոյի անջատումը Սերբիայից, համարելով դա միջազգային իրավունքի կոպիտ խախտում», «դժգոհում է» ադրբեջանցի վերլուծաբանը Vesti.az-ում: Ուրիշ հարց է, անշուշտ, թե Կոսովոյի միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքին համահունչ ճանաչած ՄԱԿ-ի միջազգային Հաագայի դատարանը «միջազգային իրավունքի» այդ ո՞ր նորմն է խախտել, սակայն երբ խոսում է ադրբեջանական աղբյուրը, հարցերը հաճախ մնում են անպատասխան:**

**Ինչեւէ՝ սերբ վեհաժողովականի գրասենյակը երեկ «եռուզեռի» մեջ էր: Ադրբեջանական Vesti.az-ից զանգահարել էին Տոդորովիչին՝ պարզելու, «թե այդ ի՞նչն է ստիպել սերբ վեհաժողովականին ստորագրել տարածքային ամբողջականությունը հաշվի չառնող հայտարարությունը: Ու սա այն դեպքում, երբ Ադրբեջանը մշտապես պաշտպանել է Սերբիայի տարածքային ամբողջականությունը»: Ինչպես պատմում է Vesti.az-ի մեկնաբանը, «Սկզբում, երբ Տոդորովիչը իմացավ, որ զանգը Բաքվից է ու խնդիրը՝ իր ստորագրությունն է, հայտարարեց, որ ինքը չի հասկանում անգլերեն, հետո, երբ մենք անցանք ռուսերենի, նա այդուհանդերձ պատասխանեց մեր հարցերին»: Այսպես. երբ հետաքրքրվել են Տոդորովիչից, թե ինքը իմացե՞լ է, թե ինչ է ստորագրում, սերբ վեհաժողովականը պատասխանել է՝ «այո», երբ հարցրել են՝ ինչո՞ւ, ըստ ադրբեջանական աղբյուրի՝ պատասխանել է. «Որովհետեւ ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակությունը պաշտպանեց մեր պատվիրակության նախաձեռնությունը»: «Իսկ մենք չե՞նք պաշտպանել Սերբիային» հարցին Տոդորովիչը պատասխանել է. «Ոչ, ադրբեջանական պատվիրակությունը չի ստորագրել մեր ներկայացրած հայտարարությունը»: Այս ամենով չբավարարվելով՝ ադրբեջանցի մեկնաբանը զրույցի է հրավիրել «անանուն զրուցակցի», որն ասել է. «Պարոն Տոդորովիչը իրականում չի իմացել թե ինչ է ստորագրում, իսկ երբ իմացել է ու ցանկացել հետ կանչել իր ստորագրությունը, արդեն ուշ է եղել»: Թե ԵԽԽՎ-ում վեհաժողովականների քանի՞ տոկոսն է ստորագրում «առանց իմանալու»՝ թողնենք պատասխանելու ադրբեջանական աղբյուրին ու նրա «անանուն զրուցակցին»:**

**Այժմ՝ «10 ֆրանսիացիների» ու Գանիրա Փաշաեւայի մասին: Վերջինս՝ ԼՂՀ-ն ճանաչող հայտարարության տակ տեսնելով տասը ֆրանսիական ստորագրությունները, անմիջապես զրուցել է նույն Vesti.az-ի հետ: Տիկին Փաշաեւան, առանց «հաշվի առնելու», որ նույն օրը տարածաշրջանում է Ֆրանսիայի նախագահը, «կշտամբել է Փարիզին՝ որպես Մինսկի խմբի համանախագահող երկրի» եւ հայտարարել. «Թե որքանո՞վ է Ֆրանսիան արդյունավետ համանախագահում Մինսկի խմբում եւ դեռ որքա՞ն պետք է նպատակահարմար համարվի այդ համանախագահությունը, կարծում եմ, պետք է քննարկվի ավելի բարձր մակարդակներում: Ինձ համար միշտ էլ, իրականում, ակնհայտ է եղել Փարիզի դիրքորոշումը ԼՂ-ի հարցում»: Սա փաստորեն արդեն բարձրաձայնած անվստահություն է՝ Մինսկի խմբի համանախագահ երկրներից մեկին, այն էլ հնչեցրած ԵԽԽՎ-ում ադրբեջանական պատվիրակության անդամի կողմից: Թե ո՞ւր կտանի այս անվստահությունը Բաքվին, նույն Բաքվին, որի համար «Հայաստանի բարեկամներ են» նաեւ ԱՄՆ-ն ու Ռուսաստանը, թերեւս գիտի միայն Իլհամ Ալիեւը, բայց դիտմամբ չի խոստովանում սեփական ժողովրդին. իր իշխանությունը պահելու կարեւորագույն լծակից չի զրկվելու մարդը:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ջրբաժան

## Կրթության եւ տգիտության միջեւ

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

***2011 թ. հոկտեմբերի 6-ին Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քննասենյակից դուրս գալուց հետո ես, որպես քննող դասախոս, ԵՊՀ-ի տարածքից կարողացա դուրս գալ միայն անվտանգության համակարգի աշխատակիցների հետ:***

***Օրինականության եւ արդարության մասին հայկական ավանդական պատկերացումների համաձայն՝ նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհն անցնում էր այդ նույն օրինականության եւ արդարության թփերը ոտնատակ տալու միջով: Անօրինականության եւ անարդարության մասին հայկական ժամանակակից պատկերացումների համաձայն՝ հայկական միջավայրը չի կարող գոյատեւել առանց անօրինականության եւ անարդարության, որոնց մեջ ներքաշված են իշխանությունն ու հասարակությունը, պետությունն՝ ամբողջությամբ: Ըստ այդմ՝ խնդիրը հանգում է օրինականության եւ արդարության մասին հայկական ավանդական եւ արդի պատկերացումներին հարմարվելուն կամ դրանց հակադրվելուն: Ջրբաժանն այստեղ է, եւ հայկական հանրության անդամների միջեւ տարբերությունը առաջանում է կամ ակնհայտ է դառնում հենց այդ ջրբաժանի մոտ: Ես ջրբաժանի այս կողմում էի՝ հակադրվողների, հանգամանք, որը ոչ միայն մտահոգում, այլեւ հունից հանում էր ջրբաժանի հակառակ կողմում գտնվող եւ քննող դասախոսի ու հանձնաժողովի վրա շարունակաբար ճնշում գործադրող ԱԺ պատգամավորներին, նախկին եւ ներկա այլ պաշտոնատար անձանց: Թեպետ ջրբաժանի նրանց կողմում գտնվողների թվաքանակը Հայաստանում մեծանում է, ինչպես հուսահատությունը:***

### 1

### Կրթությունը, ինչպես ընտրությունները

Դասախոսական աշխատանքի տասներեքամյա իմ փորձը հնարավորություն եւ իրավունք է տալիս ինձ որոշակի եզրահանգումներ անել բարձրագույն կրթական համակարգի, ուսումնական գործընթացների, ընդունելության քննական կարգի փոփոխությունների, 3-4 անգամ փոխված ուսանողական սերունդների եւ այդ ամենի հանդեպ հասարակության եւ պետության կեցվածքի մասին: Միաժամանակ, որեւէ եզրահանգում միակողմանի, թերի եւ անստույգ կլինի, եթե հայաստանյան կրթական համակարգը դիտարկվի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումներից դուրս: Եվ ինչպես սոցիալ-տնտեսական եւ հասարակական-քաղաքական ոլորտներում, այնպես էլ կրթական ոլորտում չլուծված բազմաթիվ խնդիրներ, չշտկված սխալներն այնքան են կարծրացել, որ վերածվել են անհաղթահարելի խոչընդոտների: Եվ ինչպես կրթական համակարգի արատները հնարավոր չէ դիտարկել համընդհանուր գործընթացներից զատ, այնպես էլ կրթական ողջ համակարգը՝ հանրակրթությունը եւ բուհական եռաստիճան համակարգը անհնար է դիտարկել միմյանցից զատ: Միաժամանակ, ավելի բազմակողմանի վերլուծությունը թողնելով ավելի խաղաղ ժամանակների եւ առաջնորդվելով միայն դատողությունների եւ եզրահանգումների տեսությամբ, հարկ է ընդգծել, որ փլուզված հանրակրթության պայմաններում բուհերը զանգվածորեն ստանում են վատ, թերուս, կիսագրագետ ուսանողներ, որոնցից մասնագետ պատրաստելը ոչ միայն դժվար է, այլեւ՝ անհնար: Դրանով իսկ սկիզբ է դրվում բուհական կրթության արժեզրկմանը, որի առաջին գործոնը հանրակրթության փլուզումն է: Այդ արժեզրկմանը նպաստող երկրորդ գործոնն այն է, որ ընդունելության միասնական համակարգը, որքան էլ լուրջ առավելություններ ունի նախորդ համակարգի համեմատ, այնուամենայնիվ, կրում է հայկական օրինազանցության խոր կնիքը, որի հետեւանքը սովորել չցանկացող, տգետ ու անուս ուսանողների զանգվածային «արտադրությունն է»: Արդյունքում՝ բուհը դառնում է հանրակրթության եւ միասնական քննությունների արդյունքների դակիչը: Այսօրինակ իրավիճակի արատների խորացմանը նպաստում է բուհական կրթության արժեզրկման հաջորդ՝ երրորդ գործոնը՝ բուհերում տիրող ոչ պակաս արատավոր բարքերը եւ դրանց դեմ պայքարելու անզորությունը կամ նման ցանկության բացակայությունը: Վերջնարդյունքում՝ մասնագետ դառնալու ցանկությունն ու նպատակը պահպանում են փոքրաթիվ ուսանողներ, որոնք էլ իրենց հերթին իրենց ապագան չեն կապում Հայաստանի հետ: Եվ այսօրինակ իրողությունների հետեւանքով երկրում առաջանում է ոչ թե պարզապես կադրային, մասնագիտական քաղց, այլ սկսվում է մյուս ոլորտների եւ ենթակառուցվածքների քայքայումը, քանի որ անուս ուսանողը դառնում է այս կամ այն ոլորտի ղեկավարը: Տարիներ առաջ քննությունից հերթական անբավարարը ստացած մի ուսանող անկեղծորեն պատմեց, որ մյուս դասախոսներին ասում է, որ իրեն միայն դիպլոմ է պետք եւ որ ինքը չի պատրաստվում մասնագիտությամբ աշխատել, իրեն «բավարար» նշանակում են, իսկ դուք՝ (ես) չեմ նշանակում: Ինչո՞ւ՝ հետաքրքրվում էր ուսանողը: «Որ նախարար չդառնաս»,- անկեղծորեն պատասխանեցի:

Բուհական կրթության արժեզրկման չորրորդ գործոնը վճարովի կրթական համակարգի ներդրումն է, կրթությունը բիզնեսի վերածելու մերժելի պետական ուղեգիծը: Պետական ֆինանսական չնչին հատկացումներ ստացող բուհերը ինքնաֆինանսավորման խնդրին հետամուտ՝ փորձում են նվազագույնի հասցնել քննական «անբավարարները», որ բուհը չզրկվի մեծաթիվ ուսանողների վարձավճարից: Այս հանգամանքը ուսանողների՝ չսովորելու վահանն է, եւ ստացվում է այսպես՝ վճարում եմ՝ գնահատական դրեք, այլ ոչ որակյալ կրթություն ապահովեք:

Բարձրագույն կրթության արժեզրկման հինգերորդ գործոնը ավարտական վկայականի՝ դիպլոմի համար մղվող հայոց համազգային պայքարն է, որը իսկական փորձանք է դարձել մի շարք դասախոսների գլխին: Ըստ Հայաստանում գործող ուսումնական նոր՝ Բոլոնիայի համակարգի, բոլոր ուսանողները չեն, որ կարող են բակալավրիատ ստացած քառամյա ուսումը շարունակել երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում: Սակայն նույն բոլոնյան համակարգը հնարավորություն չի տալիս տարբերակել բակալավրիատի դիպլոմները: Այստեղ նոր լուծումներ են պետք՝ կամ ներդնել ազատ ունկնդրի համակարգը եւ տալ հետեւյալ նշումով դիպլոմ՝ «մասնակցել է ուսումնական գործընթացներին՝ առանց հանձնելու կիսամյակային եւ ավարտական քննությունները եւ ստացել ազատ ունկնդրի դիպլոմ», կամ ընտրել հայկական տարբերակը՝ սահմանել գնացուցակ, ինչպես ուսման վարձավճարներն են սահմանվում, եւ ըստ այդ գնացուցակի վաճառել դիպլոմները հենց բուհ ընդունվելիս՝ «գնել է իր մասնագիտության դիպլոմ՝ ստանալով իր մասնագետի կարգավիճակ» (ոչ թե որակավորում, այլ կարգավիճակ): Ի վերջո՝ հենց այդ անուս ուսանողներն են (կամ ավելի շուտ՝ նրանց ծնողները), որ դիմորդ եղած ժամանակ գնում են միասնական քննությունները՝ սովորաբար փաթեթով: Ի սկզբանե դիպլոմը վաճառելու դեպքում, չորս, գուցե եւ ավելի տարիներ այդ ուսանողները չեն խանգարի ոչ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմին, ոչ էլ սովորելու ձգտում ունեցող իրենց համակուրսեցիներին:

Բուհական կրթության արժեզրկման վեցերորդ պատճառը հայկական բանակում տիրող արատավոր բարքերն են, իսկ բուհը, հատկապես պետպատվերով ուսուցման համակարգը, դառնում է զորակոչվելուց թաքնվելու ռմբապաստարան: Այս դեպքում լուծման ուղիները հետեւյալն են՝ ա. կամ հայկական բանակը դարձնել կյանքի համար անվտանգ, բ. կամ զորակոչային տարիքի հասած բոլոր արական սեռի ուսանողներին անխտիր զորակոչել բանակ, կամ գ. բարձրացնել զորակոչային տարիքը, որ բուհ ավարտելուց հետո բոլոր տղաները պարտադիր զինծառայություն անցնեն: Քանի դեռ Հայաստանում բանակում տիրող իրավիճակը չի հաջողվել արմատապես բարելավել, հայկական բանակը կմնա կրթական համակարգին արատավոր բարքեր թելադրող հիմնական օղակը:

Բուհական կրթության արժեզրկման յոթերորդ գործոնը կոռուպցիան է, կաշառակերությունը, հովանավորչությունը, որոնք դարձել են հայկական կրթական համակարգի մաշկը: Կոռուպցիայի հաղթահարման մեխանիզմները նույնքան պարզորոշ են եւ հստակ, որքան հստակ են կոռուպցիայի սկզբնաղբյուրները՝ ա. չսովորող, վատ ուսանողները, բ. բուհական համակարգի ցածր աշխատավարձերը, գ. անպատժելիությունը: Այդպիսի ուսանողները կոռուպցիայի շարժիչ ուժն են, որոնք հետո դառնում են հայաստանյան արատավոր քաղաքական համակարգի սյուները: Ըստ այդմ՝ համակարգը առողջացնելու կամ այն կազմաքանդելու ամենակարճ ճանապարհը չսովորող ուսանողներին ուսումնական գործընթացներից դուրս թողնելն է: Նաեւ այդ պատճառով է, որ նման ուսանողներին համակարգն ատամներով է պաշտպանում:

Կրթության եվրոպական համակարգի տեղայնացման հայկական փորձը չի հաջողվի այնքան ժամանակ, քանի դեռ հայկական միջավայրը կրթության հետ վարվում է այնպես, ինչպես ընտրությունների հետ:

### 2

### Մի քննության պատմություն

«Դուք անարխիստ եք: Դուք ձեր կանոններն ունեք: Ոչ ոքի ասածը չեք անում, ոչ մեկի չեք լսում», - քննությունից «անբավարար» ստանալով, ըստ այդմ՝ ամառային քննաշրջանի վերջին հնավորությունը կորցնելով երեսիս շպրտեց ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներից մեկը եւ դուռը շխկացնելով դուրս եկավ: Թեպետ անակնկալի եկա ուսանողի անվայել կեցվածքից, բայց հասկացա պատճառը՝ նրան «բավարար» նշանակելու միջնորդությունը, որ գալիս էր բացառիկ ազդեցիկ նրա հովանավորից, մերժել էի՝ «կպատասխանի՝ կստանա, չի պատասխանի՝ չի ստանա» ասելով: Ընթացիկ գրավոր քննություններից մեկի ժամանակ այդ ուսանողից ծածկագիրը վերցրի հենց քննության սկզբից՝ «հիմա շարունակիր առանց ծածկագրի» ասելով: Մի քանի րոպե անց նրա մոտից գտա հաջորդ ծածկագիրը, որից օգտվում էր ապշեցուցիչ հմտությամբ: Զրկվելով քննությունը շարունակելու հնարավորությունից՝ այդ ուսանողն ասաց. «Բա ո՞նց պիտի լինի»: «Պիտի պարապես»,- հետեւեց իմ պատասխանը: «Էդ վարիանտ չէ»,- ուսանողն անդրդվելի էր: Սեպտեմբերին վերահանձնելով նույն քննությունը, այդ ուսանողը հաղթահարեց բավարարի շեմը: Եվ «բավարար» նշանակելով, քմծիծաղով ասացի՝ հասկացա՞ր, որ պիտի սովորես, ուրիշ տարբերակ չկա: «Շուտ էի հասկացել»,- համեստորեն ժպտաց ինձ անարխիստ համարող ուսանողը:

Նա, ի բարեբախտություն իրեն եւ ինձ, հասկացել էր, սակայն նրա կուրսեցիներից երկուսը այսօր էլ դա չեն հասկացել: «Էդ վարիանտ չէ»՝ այս մտածողությունը արմատակալել է իրենց ամենակարող համարող հայկական որոշ ընտանիքներում, որտեղ այդ ոգով դաստիարակում են հատկապես որդիներին, քանի որ, որպես կանոն, ուսանողուհիները չեն կանգնում նման խնդրի առջեւ: Ամենակարողության, ամեն ինչ եւ ամենքին գնելու արատավոր մտածելակերպը հաղթահարել մեկ ուսումնական կիսամյակում անշուշտ անհնար է, մանավանդ որ ցանկությունն էլ բացակայում է: Այդ իսկ պատճառով սկսվում է արատավոր շրջապտույտը՝ զանգեր, էլի զանգեր, կաշառքի ակնարկներ, ապա եւ՝ ուղղակի առաջարկներ: Չսովորելու եւ գնահատվելու համար: Բոլորի նյարդերը չեն, որ դիմանում են, դասախոսների մի մասը «բավարար» նշանակում է անմիջապես, մյուսների համար էլ նման ուսանողները գտնված երազ են, թեպետ եւ՝ կոռուպցիոն երազ: Այդ իսկ պատճառով նման ուսանողները վարժվում են չսովորելով գնահատվելուն: Տեսնելով, որ իրավիճակը բարդանում է, այդ ուսանողների ծնողները վերադաստիարակում են այսպես՝ մի էրկու բան սովորի՝ գնա: Բայց այդ «էրկու բան»-ն էլ արդեն հնարավոր չի լինում սովորել չսովորելուն վարժված ուսանողի համար, եւ տոմս-տոմսի ետեւից փոխելով՝ իրականությունը չի փոխվում:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հանրային կառավարման ամբիոնի երկու ուսանողներ այս ուսումնական կիսամյակում ոչ թե պարզապես դուրս մնացին, այլ հեռացվեցին համալսարանից՝ չվերականգնվելու արգելքով: Այդ նրանք՝ Արթուր Թադեւոսյանն ու Լեւոն Մնացականյանն ու նրանց հայրենակիցներն ու հարազատ շրջապատը, ԵՊՀ-ում բառացիորեն պատերազմ սկսեցին՝ հայհոյանքներով, սպառնալիքներով, խուլիգանական գործողություններով: Լեւոն Մնացականյանը մինչեւ անգամ հարձակվեց իրեն կարգի հրավիրել փորձող դասախոսի վրա, իսկ ինձ էլ սպառնաց՝ տուն չես հասնի: Պաշտպանվա՞ծ է արդյո՞ք դասախոսը նմաններից: Բնավ: Տասը օր անընդհատ նրանցից մեկի՝ Արթուրի համար զանգահարում էին ԱԺ-ի մի շարք պատգամավորներ՝ թողած քառօրյա նիստերը, ազգային-ազատագրական պայքարի իրենց ճառերը կամ պատգամավորական մանդատի հետ զուգակցվող տնտեսական գործունեությունը, իսկ նրանցից մեկն էլ անձամբ էր եկել ստուգելու իրավիճակը:

Ես դասավանդում եմ երկու պետական բուհում՝ ԵՊՄՀ-ում եւ ԵՊՀ-ում, եւ մի քանի օրից սկսվում են այս ուս. կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները, որոնց հաջորդելու են երկրորդ ընթացիկ, ապա եւ՝ եզրափակիչ քննությունը: Հետո նույնը շարունակվելու է մյուս կիսամյակում, եւ այս ընթացքում ԱԺ պատգամավորները եւ այլ պաշտոնատար անձինք թերեւս փորձեն շարունակել իրենց թուրքական արշավանքները, մոռանալով, որ այդ մանդատը չնայած հայկական տարբերակով են ձեռք բերել, սակայն նույն տարբերակով՝ առանց պարապելու գնահատական ձեռք բերել չեն կարող: «էդ վարիանտ չէ» կամ՝ «մի երկու բան ասեմ՝ դրեք» ասելով բուհի դիպլոմ չեն ստանում:

Երբ քննության ժամանակ երկրորդ կուրսն ավարտել փորձող վերոհիշյալ ուսանողներից Արթուրին հարցրեցի, թե ո՞րն է անցումային հասարակությունը, եւ ինչո՞ւ են գիտակցության ուղղորդման տեխնոլոգիաները հատկապես արդյունավետ աշխատում այդ հասարակություններում, նա վստահ պատասխանեց՝ օրինակ՝ Հայաստանը անցումային երկիր է, քանի որ Ռոբերտ Քոչարյանի ժամանակ վիճակը վատ էր, իսկ հիմա՝ լավ: Ես եւ քննությանը մասնակցող ամբիոնի վարիչը թեթեւակի ժպտացինք: Ուսանողին նորից բացատրեցի, եւ վերջին լուծարքին դարձյալ նույն հարցը տվեցի՝ ո՞րն է անցումային հասարակությունը: Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողը պատասխանեց՝ դե մենք, քանի որ 20-րդ դարից անցել ենք 21-րդ դար:

Որքան էլ ողբերգական կամ գուցե զավեշտալի է այս պատասխանը, բայց ուսանողի հայտնաբերած նոր սահմանումը արդիական է: Կրթության նկատմամբ նման վերաբերմունքը պահպանելու դեպքում մենք՝ ՀՀ քաղաքացիներս, 21-րդ դարից 22-րդ դար չենք անցնի: Ըստ այդմ՝ անցումային հասարակությունը սահմանելու-բացատրելու կարիք չի լինի: Մենք ոչ թե անցումային երկիր կլինենք, այլ՝ պատմության գիրկը հավերժորեն անցած ժողովուրդ: Եվ այստեղ կրթության եւ տգիտության միջեւ ջրբաժանը կվերանա՝ հայկական տարածքը թողնելով տգիտությանը:

# Հարեւանության ծրագրում չկա ԵՄ-ին անդամության խոստում, բայց...

Եվրոպական հարեւանության լրագրողական ցանցի շրջանակներում չորս տարի իրականացված նախագիծը առավել քան հաջողված որակեց ԵՄ-ի ընդլայնման ու եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն՝ ելույթ ունենալով նախագծի ավարտական հանդիպման «Մամուլի ապագան» համաժողովում, որ երեկ ավարտվեց Բրյուսելում:

ԵՄ հանձնակատարը լրագրողների դասընթացներն ու ցանցային քննարկումները կարեւորեց հատկապես թունիսցի եւ եգիպտացի լրագրողների համար, որոնք ծրագրին մասնակցել են հեղափոխությունների ընթացքին զուգահեռ: «Լավ գործ է արվել», շեշտեց եվրոհանձնակատարը, ընդգծելով մամուլի կարեւոր դերակատարությունը, հատկապես, երբ արաբական գարնան հեղափոխությունները ցույց տվեցին, որ մարդկանց պահանջը ոչ թե իշխանությունների՝ իրենց ունկնդիր լինելն է, այլ հասարակության համար իշխանությունների աշխատանքը:

Ֆյուլեն խոստովանեց, որ երբ նախաձեռնվում էր ԵՄ արտաքին քաղաքականությանն առնչվող Լիսաբոնյան համաձայնագիրը, նպատակն ուղղակի ընդհանուր արտաքին քաղաքական մոտեցումների մշակումն էր, սակայն «իրականում պարզվեց, որ պետք է գնանք հեռուն, եւ դա ոչ թե եվրոպական հաստատություններում կուտակված փորձառության հիմքով, այլ մեր հարեւանության գործընկերների հետ տարբեր մակարդակներում ներգրավվածության»:

Եվրոպական մոտեցումների ու հարեւանության հիմքում, ըստ Ֆյուլեի, դրված է գործընկեր երկրների քաղաքացիների սպասումների ու ձգտումների բավարարումը: Այս առումով էլ հենց հարեւանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների իշխանություններից բացի ԵՄ-ն սկսեց փորձել «խոսել» նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ավելի քան երկու հարյուր լրագրողներից կազմված լսարանի առջեւ Շտեֆան Ֆյուլեն ԵՄ «հարեւաններին» հիշեցրեց, որ վերանայված քաղաքականությամբ հարաբերություններն այսուհետեւ կառուցվելու են «որքան շատ բարեփոխում, այնքան մեծ աջակցություն» մոտեցմամբ, ընդ որում, եթե բավարարված չլինեն հարեւանների քաղաքացիները, ԵՄ-ն կարող է վերանայել, հատկապես ոչ լավ իմաստով, արդեն իսկ վերանայված իր քաղաքականությունը:



Եվրոմիությունը, ինչպես քանիցս ասել է (բայց հրագործել բացասական իմաստով), տարբերակված մոտեցում է ցուցաբերում ինչպես հարավային, այնպես էլ Արեւելյան հարեւաններին: «Արեւելքում մենք քանդել ենք պատը Եվրոպայի ու արեւելյան գործընկերության որոշ երկրների միջեւ, մեր մեկնաբանությամբ, արեւելյան գործընկերների հետ հարաբերություններով», ասաց ԵՄ-ի հանձնակատարը: Միեւնույն ժամանակ, ըստ Ֆյուլեի, թեեւ հարեւանության ծրագրում «չկա անդամության խոստում, բայց դա հնարավոր է պարտավորությունների կատարման միջոցով»:

## Սովետական հոդվածներով դատապարտումը՝ անընդունելի

Պատասխանելով ուկրաինացի լրագրողների հարցին, թե ինչպես է պատրաստվում արձագանքել ԵՄ-ն Ուկրաինայի նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի նկատմամբ կայացված դատավճռին, որով նա դատապարտվել է յոթ տարվա ազատազրկման, Շտեֆան Ֆյուլեն պատասխանեց, որ ԵՄ-ը դեռեւս հունվարին ուկրաինացի իր գործընկերներին հստակորեն ասել է, որ պետք է զգույշ լինել դատական համակարգը օգտագործելիս այնպիսի մի պարագայում, երբ մարդուն ներկայացվող լրջագույն մեղադրանքների հիմքում սովետական արմատներով օրենսդրական հոդվածներն են:

Տիմոշենկոյի դատավճռի կայացման հանգամանքին է անդրադարձել նաեւ ԵԱՀԿ գործող նախագահ Աուդրոնիուս Աժուբալիսը՝ Վիլնյուսում հայտարարելով, որ ԵԱՀԿ-ն մտահոգ է նման դատավճռի կայացմամբ եւ ուկրաինական իշխանություններին կոչ է արել ամբողջապես թափանցիկ վերաքննություն իրականացնել: ԵԱՀԿ-ի գործող նախագահի գնահատականը հատկապես հետաքրքրական է, քանի որ 2013-ին Ուկրաինան պատրաստվում է ստանձնել ԵԱՀԿ-ի նախագահությունը:

Այդուհանդերձ, ԵՄ-ն Տիմոշենկոյի դատավճռին կանդրադառնա նաեւ պաշտոնական հաղորդագրությամբ, իսկ մինչ այդ Ֆյուլեն ընդգծեց, որ արդար դատական գործընթացը պետք է զուգահեռվի այն իրավիճակի հետ, երբ Ուկրաինային «մի քանի քայլ է մնացել ավարտելու Ասոցացման համաձայնագրի բանակցությունները»:

«Գործընթացը դեռ ավարտված չէ, եւ ես կհետեւեմ դրան ամենայն ուշադրությամբ», վերջում ավելացրեց Ֆյուլեն:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բրյուսել

# Տիմոշենկոյին մեղավոր ճանաչեցին «գազի գործով»

Կիեւի դատարաններից մեկում երեկ դատավոր Ռոդիոն Կիրեեւը հրապարակել է Ուկրաինայի նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի դատավճիռը, ըստ որի նա մեղավոր է ճանաչվում իրավասությունների վերազանցման մեջ: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:

Դատավորի խոսքերով՝ Տիմոշենկոն սեփական իրավասությունները վերազանցել է 2009-ին Ռուսաստանի հետ գազային պայմանագրերի կնքման ժամանակ: Կիրիենկոն նաեւ համաձայնել է դատախազության այն պնդմանը, թե նախկին վարչապետն իր գործողություններով ուկրաինական կողմին 1,5 մլրդ գրիվնայի (մոտ 187 մլն դոլարի) վնաս է պատճառել:

Դատավորը Տիմոշենկոյին դատապարտել է 7 տարվա ազատազրկման: Ավելի վաղ դատախազը պահանջել էր նախկին վարչապետին դատապարտել հենց 7 տարվա բանտարկության:



Դատավորը նշել է, որ նկատի ունենալով Տիմոշենկոյի հանրային վտանգավոր արարքները, ինքը դատավճիռը մեղմացնելու հիմքեր չի տեսնում: Տիմոշենկոն պատիժը կրելու է Կիեւի մարզի տարածքում: Նրա ազատազրկման ժամկետի մեջ ներառվելու է քննչական մեկուսարանում գտնվելը:

Ինքը՝ Տիմոշենկոն, ժխտում է իրեն ուղղված բոլոր մեղադրանքները: Օրերս նա դատարանում հայտարարել էր, որ իր դատավճիռն արդեն գրված է եւ որ այն կլինի մեղադրական:

Յուլիա Տիմոշենկոյի դատավարությունն Արեւմուտքում քննադատությունների ալիք է բարձրացրել: Նրա պաշտպանությամբ հանդես են եկել մասնավորապես Եվրոմիության ներկայացուցիչները: Մամուլում վերջերս ենթադրություն էր արվել, թե ԵՄ-ի ճնշման պայմաններում նրա համար կնշանակվի ազատազրկման հետ չկապված պատիժ:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ադրբեջանում շարունակվում է ընդդիմության առաջնորդների բանտարկումը

**Այդ մասին երեկ նշել է թուրքական «Դունյա բուլթենի» լրատվական գործակալությունը: Ի դեպ, հոկտեմբերի 6-ին, այդ նույն գործակալությունը «Ադրբեջանում մեկ առ մեկ բանտարկում են ընդդիմության առաջնորդներին» վերնագրով անդրադարձել էր միեւնույն հարցին: Բանտարկության պարագայում խոսքը վերաբերում էր այն առաջնորդներին, որոնք Բաքվում այլընտրանքային**

**Հատկանշական է, որ այս գործիչների ազատազրկման դատավճիռն արձակվել էր Եվրոմիության արեւելյան գործընկերության անդամ երկրների պետության կամ կառավարության ղեկավարների Վարշավյան գագաթաժողովից անմիջապես հետո, դատավճռի առնչությամբ զարմանք էր արտահայտել Ադրբեջանում ԱՄՆ դեսպանությունը, եւ ընդդիմությունը Ալիեւի իշխանություններին**



**խորհրդարանի կազմակերպած հակակառավարական ցույցին մասնակցելու համար ձերբակալված էին դեռեւս ապրիլի 2-ին:**

**Բաքվի դատարանը օրերս ավարտել էր սրանց գործի քննությունը, 2-ից մինչեւ 2 տարի 6 ամսյա ազատազրկման էր դատապարտել «Մուսավաթ» կուսակցության գործադիր կոմիտեի նախագահ Արիֆ Հաջիլիին, «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության հասարակայնության հետ կապերի վարչության ղեկավար Մուհամմեդ Մեջիդլիին, «Մուսավաթի» երիտասարդական կազմակերպության նախագահ Թուրալ Աբբասլիին եւ «Ժողովրդական ճակատի» փոխնախագահ Ֆուադ Ղահրամանլիին:**

**մեղադրելիս ընդգծել էր ազատազրկման դատապարտված այս գործիչների հետամուտ լինելը հակառուսական դիրքորոշման:**

**Երեկվա որոշումով, ինչպես վկայում է «Դունյա բուլթենին», Բաքվի դատարանը 18 ամսից մինչեւ 3 տարի ազատազրկելու վճիռ է կայացրել եւս 4 ընդդիմադիր գործչի նկատմամբ: Այսպիսով, Ադրբեջանում ազատազրկված գործիչների թիվը հասել է 13-ի: Ի դեպ, սրանք եւս ապրիլի 2-ին այլընտրանքային խորհրդարանի Բաքվում կազմակերպած ցույցին էին մասնակցել, ձերբակալված էին հենց նույն օրը:**

Հ. Չ.

# ԵՄ-ը պահանջում է Կահիրեի դեպքերի կազմակերպիչներին

*Իշխանությունները պատրաստ են զիջումներ անել ղպտիներին*

**Եվրոպական պետությունների ղեկավարները դատապարտել են Կահիրեում եւ Եգիպտոսի այլ քաղաքներում հոկտեմբերի 9-ին եւ 10-ին տեղի ունեցած անկարգությունները, որոնց ընթացքում, վերջին տեղեկությունների համաձայն, սպանվել է 36 մարդ (մեծ մասը՝ քրիստոնյա ղպտիներ): Վիրավորների թիվն անցնում է 300-ից:**

**Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը Լյուքսեմբուրգում ԵՄ-ի արտգործնախարարների առջեւ ելույթ ունենալով ասել է, որ ինքը շատ մտահոգ է Եգիպտոսի իրադարձություններից: Այդ մասին հաղորդում է Egyptian Tribune թերթը:**

**Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը Եգիպտոսի կառավարությանը կոչ է արել դաշտ տալ անմեղ զոհեր պատճառած անկարգությունների կազմակերպիչներին, ինչպես նաեւ երկրում ապահովել կրոնական հանդուրժողականություն: Իտալիայի արտգործնախարար Ֆրանկո Ֆրատինին Եվրոմիությանը հորդորել է վճռականորեն դատապարտել քրիստոնյաների հալածանքները Եգիպտոսում:**

**Բուն Եգիպտոսում իրադրությունը մնում է լարված: Ղպտիները զինվորականներին մեղադրում են բախումների ընթացքում սպանված քրիստոնյաների մարմինները Նեղոս գետը նետելու համար: Այդ մասին հաղորդում է «Ալ Մասրի ալ Յոում» թերթը: Երեկ «Ազգը» գրեց Կահիրեում կիրակի օրը հազարավոր ղպտի ցուցարարների վրա զինծառայողների եւ ոստիկանների կատարած հարձակման եւ բախումների մասին:**

**Եգիպտոսի վարչապետ Էսամ Շարաֆը եկեղեցիներ կառուցելու իրավունք պահանջող ղպտիներին ամբաստանել է «դավադրության» մեջ, որին իբր մասնակցում են նաեւ օտարերկրյա ուժեր: Հարկ է նշել, որ Եգիպտոսի բնիկները՝ ղպտիները, ներկայումս կազմում են երկրի բնակչության 10 տոկոսը եւ պարբերաբար ենթարկվում են կրոնական հալածանքների:**

**Վերջին տեղեկությունների համաձայն, Եգիպտոսի իշխանությունները անկարգությունների կազմակերպման կասկածանքով ձերբակալել են 40 անձանց: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, իշխանությունները նաեւ պատրաստ են որոշ զիջումներ անել քրիստոնյա ղպտիներին: Կառավարությունը երեկ հայտարարել է, որ մշակել է օրինագիծ, որով օրինականացվելու են ավելի վաղ առանց համապատասխան թույլտվության կառուցված եկեղեցիները:**

**Ռոյթեր գործակալությունը իր հերթին հաղորդում է, որ Կահիրեում ի կատար է ածվել այն ոճրագործի մահավճիռը, որը հունվարին գնդակահարել էր մի խումբ ղպտիների: Այն ժամանակ սպանվել էր 7 մարդ:**

**Կահիրեի կենտրոնում ուժեղացված են անվտանգության միջոցառումները. իշխանությունները վախենում են կրոնական հողի վրա բախումների կրկնությունից:**

# Մեկնարկեց օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովը

Երեկ Հայաստանի գրողների միության դահլիճում մեկնարկեց օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովը, որի խորագիրն էր «Հայկական ճակատագիրը օտարագիր հայ գրողների ստեղծագործության մեջ»: Այն անցկացվում է ՀԳՄ-ի, մշակույթի, սփյուռքի նախարարությունների եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ: Համաժողովի միակ ու անփոփոխ հովանավորն է ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը: ՀԳՄ նախագահ **Լեւոն Անանյանը** բացելով համաժողովը, ասաց. «Երբ 2005-ին մտահղացվեց Համահայկական գրական ժողովներին զուգընթաց կազմակերպել նաեւ օտարագիր հայ գրողների համախմբումներ, որոշ անձանց մոտ տարակուսանք առաջացավ: Սակայն գործը ցույց տվեց, որ այսօր օտարագիր հայ գրականությունն ու օտարագիր հայ գրող երեւույթը ծագել է եւ հայացել է մեր ժողովրդի պատմական ճակատագրի թելադրանքով: Սերնդե-սերունդ կորցնելով մայրենի լեզուն, ստեղծագործելով տարբեր երկրներում, օտարագիր հայ գրողները դարձել են տվյալ երկրների գրականության անվանի ներկայացուցիչներ, իրենց ստեղծագործությունների առանցքը համարելով Հայոց ցեղասպանությունը, Հայ դատը, հայի կերպարը, Հայաստանը եւ հայի առանձնահատուկ տեսակը»:



Այս 4-րդ համաժողովին մասնակցում են 15 երկրների 30 պատվիրակներ տարբեր մայրցամաքներից: Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ սփյուռքի նախարարը եւ կարեւորեց օտար ափերում հայ գրականությունը միջազգային գրական աշխարհին ներկայացնելու եւ հայ ժողովրդի կարեւոր հիմնահարցերը բարձրաձայնելու խնդրում: Նախարարը նաեւ ընթերցեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի ուղերձը, որում նշվում էր. «Այս համաժողովում տարբեր երկրներից հայազգի տարբեր գրողների այսպիսի լայն ներկայացվածությունը թույլ է տալիս կանխատեսել ակտիվ եւ բովանդակալի քննարկումներ, բոլորիս հուզող ազգային եւ ստեղծագործական հարցերի շուրջը»:

**Հրանուշ Հակոբյանը** սփյուռքի նախարարության բարձրագույն պարգեւով՝ Վիլյամ Սարոյան մեդալ հանձնեց Մադլեն Գարագաշյանին (ԱՄՆ), Արամ Արքունին, Վարդենի Բեդանյանին, իսկ նախարարության պատվոգրերը՝ Նաթելլա Լալաբեկյանին (ՌԴ), Խաչիկ Խաչերին (Իրան), Լեւոն Օսիպյանին (ՌԴ):

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ու շնորհավորեց ՌՀԿ եւ ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանը**: Նա նշեց, որ ՀՀ անկախության 20-ամյակի եւս մեկ ձեռքբերումներից մեկն է ԳՄ նախաձեռնած այս համաժողովը: «Դա ձեռքբերում է, որ հաստատում է մի կողմից աշխարհասփյուռ գրական արժեքները մայր հայրենիքի շուրջը համախմբվելու մեր կամքը, մյուս կողմից՝ այդ արժեքներին տեր ու սատար կանգնելու վճռականությունը: Եվ իր գործունեության այս դաշտում Գրողների միությունը սերտորեն համագործակցում է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հետ: Այս համագործակցությունը բնական եւ տրամաբանական է, քանի որ համընկնում են մեր կառույցների նպատակները, մեր գործունեությունը ծավալվում է մտահոգության նույն առանցքի շուրջ: Մեր համագործակցության հիմքում ընկած է ազգահավաքի առաքելությունը՝ միասնաբար դիմագրավելու նոր հարյուրամյակի մարտահրավերներին, սատարելու նորանկախ հայրենիքին՝ հզոր ու բարեկեցիկ պետության տեսլականով, համախմբել մեր մտավոր եւ ստեղծագործական ներուժը»:

Իրենց բազմաբնույթ գործունեության շրջանակում Համաշխարհային հայկական կոնգրեսը (ՀՀԿ) եւ Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ) արդեն 4-րդ տարին է, ինչ ձեռնարկել եւ ՀԳՄ-ի հետ անցկացնում են «XXI դար. հայ արձակ» գրական մրցանակաբաշխությունը: Այդ մրցույթը նպատակ ունի խթանել ժամանակակից հայ արձակի զարգացմանը, նպաստել, ցավոք, այնքան խոցելի մեր գրողների սոցիալական վիճակի բարելավմանը, հայտնաբերել նոր շնորհալի անուններ: Ուրախալի է, որ տարեցտարի ընդլայնվում է մասնակիցների ցանկը, ստեղծվում են նոր գործեր, որոնց մի մասը հրատարակվում է առանձին մատենաշարով ՀՀԿ եւ ՌՀՄ ջանքերի շնորհիվ: Կենտրոնի միջոցով հրատարակվել են ինչպես ցեղասպանության, այնպես էլ Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ մի քանի տասնյակ գրքեր ու աշխատություններ:

Պրն Աբրահամյանն ասաց, որ հաջորդիվ անցկացվող մրցույթի պահանջները կընդլայնվեն եւ հովանավորությունը, անշուշտ, կշարունակվի: Այնուհետեւ պրն Աբրահամյանը մրցանակներ հանձնեց երեք անվանակարգերում հաղթող ճանաչված գրողներին՝ Գուրգեն Խանջյանին «Ենոքի աչքը» վեպի, Էդվարդ Խաչիկյանին «Սպիտակ գայլը» պատմվածաշարի, Հուսիկ Արային «Միայնակ շան լուսնահաչը» վիպակի համար: Իսկ ժյուրիի հատուկ մրցանակին արժանացավ սփյուռքահայ արձակագիր Պողոս Գուբելյանը (ԱՄՆ): ԳՄ նախագահ Լեւոն Անանյանը բարձր գնահատելով ՀՀԿ, ՌՀՄ գործունեությունը եւ համագործակցությունը ԳՄ վարչության որոշմամբ Արա Աբրահամյանին հանձնեց միության «Գրական բարերար» բարձրագույն պարգեւը:

Մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** ողջունեց ու շնորհավորեց ներկաներին, կարեւորեց հայ գրականության ու օտարագիր գրողների դերը եւ նախարարության ոսկե մեդալներ հանձնեց Փիտեր Սուրյանին (ԱՄՆ), Փիտեր Քաուին (ԱՄՆ), Մկրտիչ Մարկոսյանին (Թուրքիա), Ալա Ուայթհորնին (Կանադա), Ալեքսանդր Բոժկոյին (Ուկրաինա) եւ Րաֆֆի Քանդյանին (Գերմանիա):

Համաժողովի մասնակիցները լիագումար նիստը մինչեւ հոկտեմբերի 15-ը կշարունակեն Ծաղկաձորի Գրողների միության ստեղծագործական տանը, որտեղ բացի 54 զեկույցներից կլինեն նաեւ գրքերի շնորհանդեսներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ամփոփվեցին «Թանգարանային գիշեր» մրցույթի արդյունքները

Այս տարվա մայիսի 14-ին մշակույթի նախարարությունը անցկացրել էր «Թանգարանային գիշեր» ամենամյա միջոցառումը, որի մասին տեղեկություններ «**Ազգը**» տվել էր: Ի թիվս այլ միջոցառումների, կազմակերպվել էր նաեւ «Թանգարանային գիշեր» անդրանիկ մրցույթը: Երեկ Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում, մշակույթի փոխնախարար **Արեւ Սամուելյանը** ողջունեց ու շնորհավորեց լավագույն 100 այցելուներին, որոնք կարողացել էին մեկ օրվա ընթացքում այցելել 11-28 թանգարան: Հաղթողներին հանձնվեցին հուշանվերներ եւ մեկ տարի թանգարաններ այցելելու անվճար աբոնեմենտ: Հաղթողների թվում էր նաեւ «**Ազգի**» լրագրողը: Տկն Սամուելյանն ասաց, որ մեկ օրում ակցիայի շրջանակներում, հանրապետության բոլոր թանգարաններ այցելածների թիվը հասել է 800.000-ի, որը աննախադեպ է: Ակցիան կլինի ամենամյա, որպեսզի թանգարանների նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի բարձրանա:



Մ. Մ.

ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ Է ՎԱՏ

# Թուրքիան եւ Ադրբեջանը չեն մասնակցի Մանկական Եվրոտեսիլին



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ Անի Պլազա հյուրանոցում տեղի ունեցավ «Մանկական Եվրոտեսիլ 2011» մանկական երգի մրցույթի ասուլիսը, որի շրջանակում խոսեցին շոուի նախապատրաստական աշխատանքների մասին: Բանախոսներն էին Սիթսե Բակերը՝ Մանկական Եվրոտեսիլի ղեկավարը, Պեր Սանդին՝ լուսային ձեւավորման պատասխանատու, Գռեհմ Սթրոնգը՝ World vision Հայաստան կազմակերպության տնօրենը, Գոհար Գասպարյանը՝ հայաստանյան պատվիրակության ղեկավարը, Արտակ Վարդանյանը՝ կազմկոմիտեի մամուլի ղեկավարը:

**Գոհար Գասպարյանն** ասաց. «Շոուն բաժանվել է երկու մասի՝ դեկտեմբերի 2 եւ 3, սակայն մրցույթը կհեռարձակվի միայն մեկ օր՝ դեկտեմբերի 3-ին: Տեղի ունեցավ վիճակահանություն եւ ընտրվեցին առաջին եւ երկրորդ մասերի մասնակիցները, սակայն հերթականությունը կընտրի շոուի պրոդյուսերը, ըստ երգերի մեղեդայնության: Հայտնի է արդեն, որ մրցույթը մեկնարկելու է Ռուսաստանը, իսկ փակումը կատարելու է Բելգիան: Նշենք, որ մենք ներկայանալու ենք չորրորդ համարի ներքո՝ Դալիթայի «Բարի գալուստ Հայաստան» երգով: Նախապատրաստական աշխատանքները իրենց բուռն ընթացքի մեջ են եւ արդեն սկսվել է բեմի կառուցումը, մարզահամերգային համալիրի կարգավորումը: Խոստանում ենք անել ամեն ինչ, որպեսզի կայանա եվրոպական ստանդարտներին համապատասխան, միաժամանակ հայկական կոլորիտով գեղեցիկ շոու»:

Տոմսերը վաճառքի կհանվեն հոկտեմբերի 15-ից եւ կարժենան 1000-20000 դրամ եւ ավելի: Նշենք, որ Մանկական Եվրոտեսիլին Ադրբեջանը եւ Թուրքիան չեն մասնակցելու: Քվեարկության կարգը չի փոխվել, ինչպես ամեն տարի քվեարկությունը տեղի կունենա 50/50 հարաբերակցությամբ, իսկ հեռուստադիտողը կքվեարկի բոլոր մասնակիցների ելույթների ավարտից հետո:

Սա հրաշալի հնարավորություն է, որպեսզի բարձրացնենք տեղեկացվածությունը հայաստանում ապրող երեխաների խնդիրների մասին, քանի որ World vision-ը զբաղվում է երեխաների խնդիրներով, ասաց **Գռեհմ Սթրոնգը**:

Արդյոք համապատասխանո՞ւմ է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը եվրոպական ստանդարտներին, Մանկական Եվրոտեսիլի ղեկավարը՝ **Սիթսե Բակերը** պատասխանեց. «Այո, լիովին համապատասխանում է, եւ երբ Հայաստանը ընտրվեց հյուրընկալող երկիր՝ մենք նախապես կատարել էինք ճշտումներ անվտանգության եւ կազմակերպչական աշխատանքների մասին»:

Անդրադառնալով կազմակերպչական աշխատանքներին կամավորների ներգրավմանը, Գոհար Գասպարյանն ասաց. «Շատ լուրջ ընտրություն է տեղի ունեցել եւ այդ կազմում պատահական մարդիկ չկան»:

Պատրաստվում է հետաքրքրական տեսահոլովակ «Բարի գալուստ Հայաստան» երգի հիման վրա, որին մասնակցում են Մանկական եվրոտեսիլ 2011-ի հայաստանյան ընտրության մասնակից երեխաները, այն եթեր կհեռարձակվի շատ շուտով:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Երեւանյան 5-րդ միջազգային երաժշտական փառատոնը եզրափակվում է



Այսօր, Արամ Խաչատրյան համերգասրահում կկայանա Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի 85-ամյակին եւ ՀՀ Անկախության 20-ամյակին նվիրված երաժշտական 5-րդ միջազգային փառատոնի եզրափակիչ համերգը: Ավելի քան մեկ ամիս առաջ մեկնարկած երաժշտական փառատոնը ներկայացրեց շուրջ տասը սիմֆոնիկ եւ կամերային երաժշտության համերգներ, որոնց մասնակցում էին աշխարհի տարբեր ծայրերից հրավիրված 15 հռչակավոր երաժիշտներ: Փառատոնի ծրագրերում ընդգրկված էին համաշխարհային դասական երաժշտարվեստի մեծերի գլուխգործոցները, անցկացվեցին 5 վարպետության դասեր, «**Ազգին**» ասաց ՀՊՖՆ գեղ.ղեկ եւ գլխ. դիրիժոր **Էդուարդ Թոփչյանը**:

Տեղեկացնենք, որ այսօրվա եզրափակիչ համերգի ընթացքում կհնչեն Շոստակովիչի «Տոնական նախերգանք», Բեթհովենի «Դաշնամուրի կոնցերտ թիվ 5» եւ Ստրավինսկու «Հրեղեն հավքը» ստեղծագործությունները ՀՊՖՆ-ի կատարմամբ: Իսկ դաշնամուրի մոտ կլինի Եվգենի Սուդբինը (Մեծ Բրիտանիա): Համերգի դիրիժորը՝ **Քրիստոֆեր Ուորեն-Գրին** (Մեծ Բրիտանիա) «**Ազգի**» հետ զրույցում ասաց, որ հայ կոմպոզիտորներից միայն մի քանիսին է ճանաչում, բայց եթե իրեն հայ կոմպոզիտորները ուղարկեն իրենց ստեղծագործությունները, ապա հավանելու դեպքում կընդգրկի իր համերգացանկում:

Մ. Մ.

# Հայաստանը կհաղթի հարձակողական մեծ ներուժի շնորհիվ

## *Այս կարծիքին են Արկադի Անդրեասյանն ու Սերգեյ Պողոսյանը*

Երեկ «Հենարան» մամուլի ակումբում լրագրողների հետ հանդիպման էին եկել Երեւանի «Արարատի» լեգենդար ֆուտբոլիստներ, ԽՍՀՄ չեմպիոն ու կրկնակի գավաթակիր Արկադի Անդրեասյանն ու Սերգեյ Պողոսյանը, որոնք խոսեցին հավաքականի ելույթների մասին ու իրենց կարծիքը հայտնեցին Իռլանդիա-Հայաստան ընտրական մրցախաղից առաջ:



ՖՈՏՈԼՈՒՐ

**Արկադի Անդրեասյան**-Ազգային հավաքականի կորիզն արդեն ձեւավորված է, թիմը վերելք է ապրում, ուստի այսօրվա խաղից էլ պետք է դրական արդյունք ակնկալել: Հայաստանում ֆուտբոլն իրոք զարգանում է: Սակայն հավաքականում ընդգրկված ֆուտբոլիստների մեծամասնությունը հանդես է գալիս արտերկրի թիմերում, խաղում են ավելի ուժեղ առաջնություններում, ինչը նպաստում է նրանց վարպետության աճին: Այսօր մեր հավաքականին չափազանց ծանր խաղ է սպասում: Իռլանդացիներին նույնիսկ ոչ-ոքին է բավարարում 2-րդ տեղը գրավելու համար, իսկ Ջովանի Տրապատոնին սիրում է լավ պաշտպանվել: Արդեն 4 խաղ իռլանդացիները գոլ բաց չեն թողել, ինչը վկայում է հուսալի պաշտպանության մասին:

Կարծում եմ, որ եթե մեր ֆուտբոլիստները դաշտի յուրաքանչյուր հատվածում ճնշում գործադրեն մրցակցի վրա, ինչպես սլովակների հետ խաղում էր, ապա ամեն ինչ հաջող կընթանա: Եթե առաջինը գոլ խփենք, ապա կհաղթենք: Հոգեբանորեն պետք է պատրաստ լինել: Այնքան էլ հեշտ չէ նման վճռորոշ խաղում հաղթելը: Նման դեպքերում կարեւորվում է փորձը, հաղթողի հոգեբանությունը: Օրինակ Մխիթարյանը «Շախտյորում» ունի նման փորձ ու հոգեբանություն: Այսօր բոլորն էլ պետք է կարողանան հաղթողի հոգեբանություն դրսեւորել, ոգի ցուցադրել:

Եթե անկեղծ լինենք, մեր պաշտպանությունը մի փոքր թույլ է, որի արդյունքում մեր դարպասի մոտ վտանգավոր պահեր են ստեղծվում: Սլովակները մեզ գոլ չխփեցին, մեզ բախտը ժպտաց ու մենք գրավեցինք մրցակցի դարպասը ու առավելության հասանք: Բոլոր օղակներում էլ պետք է բարձրակարգ ֆուտբոլիստներ ընդգրկված լինեն, այնպիսիք, ինչպիսին են Հենրիխ Մխիթարյանն ու Յուրա Մովսիսյանը: Նրանք միտք ու հզորություն հաղորդեցին թիմի հարձակողական գործողություններին: Բարձր է այդ ֆուտբոլիստների կատարողական վարպետությունը: Մակեդոնացիներին Մխիթարյանը շատ գեղեցիկ գոլ խփեց: Պաշտպանությունում նույնպես պետք է նման բարձրակարգ ֆուտբոլիստներ ունենանք:

**Սերգեյ Պողոսյան**-Մեր հավաքականի վերջին հանդիպումներն իրոք բոլորիս ուրախացրել են: Մենք գեղեցիկ եւ բովանդակալից ֆուտբոլ տեսանք: Դա գլխավոր մարզչի եւ ֆուտբոլիստների վաստակն է: Ամեն ինչի հասել են իրենց քրտնաջան աշխատանքի, վարպետության շնորհիվ: Իրոք, այսօր Դուբլինում շատ ծանր խաղ է լինելու: Մրցակիցն ուժեղ է, սակայն մեր հավաքականը եւս թույլ չէ: ՀՀ հավաքականը ցուցադրում է ժամանակակից կոլեկտիվ ֆուտբոլ, բոլոր օղակները լավ են փոխապահովում միմյանց, եւ դա հույս է ներշնչում, որ մենք այսօր կհաղթենք: Տղաները ոգեւորությամբ կխաղան եւ եթե մարզական բախտն էլ մի քիչ ժպտա մեզ, ամեն ինչ լավ կլինի:

Գլխավորը մեկնարկում գոլ բաց չթողնելն է: Մեր ֆուտբոլիստները, ինչպես բոլոր հայերը, սիրում են հարձակվել եւ գոլ խփելու հնարավորություն անպայման կունենան: Ես լավատես եմ: Ֆուտբոլը միավորում է մարդկանց, մեծ էներգիա է տալիս մեր ժողովրդին: Եթե նույնիսկ չհաղթենք, չպետք է հուսալքվել, քանի որ հայկական ֆուտբոլը զարգանում եւ առաջադիմում է:

Ամենագլխավորն այն է, որ Վարդան Մինասյանի շնորհիվ մերոնք կոլեկտիվ ֆուտբոլ են ցուցադրում: Նա ստեղծեց թիմը, համախմբեց տղաներին: Ֆուտբոլիստները կատարում են նրա մշակած ռազմավարությունը, պահպանում են խաղային կարգապահությունը: Մեր հարձակողական ներուժը շատ մեծ է, որի շնորհիվ էլ կհաղթենք:

# Դավիթ Գրաֆը ֆինանսապես կաջակցի Բեռլինի հայկական դպրոցին

**Գերմանիայի «Զաուերլանդ» պրոֆեսիոնալ բռնցքամարտի ակումբի սան Դավիթ Գրաֆը (Վահագն Սահակյան) իր 5-րդ մենամարտն էլ ժամկետից շուտ ավարտեց: Գերմանիայի Հաթերսհայմեր քաղաքում բելառուսցի Ալեքսանդր Բակի հետ մենամարտը տեւեց ընդամենը 1 րոպե 48 վրկ: Տեսնելով Գրաֆի բացարձակ առավելությունը ու գրոհների ընթացքում վերջինիս հուժկու հարվածները, Բակի մարտավկաները որոշեցին հրաժարվել հետագա պայքարից՝ լուրջ անախորժություններից խուսափելու նպատակով: Դավիթ Գրաֆին հաղթանակ գրանցվեց տեխնիկական նոկաուտով: Պրոֆեսիոնալ ռինգում Գրաֆը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:**



**Մենամարտի ավարտից հետո Դավիթ Գրաֆը հայտարարել է, որ հաղթանակը նվիրում է հայկական դպրոցի աշակերտներին եւ ցանկանում է դպրոցին ֆինանսական օգնություն ցուցաբերել:**

**«Այսօր ինձ եւ դպրոցի աշակերտների համար կրկնակի ուրախալի օր է, քանի որ Դավիթն իր հերթական հաղթանակով ոչ միայն ուրախացրեց եւ հպարտության բերկրալի զգացումով լցրեց մեր հոգիները, այլեւ ցանկություն հայտնեց դրամական աջակցություն ցուցաբերել Բեռլինի հայկական դպրոցին», Դավիթ Գրաֆի մենեջեր Ժիրայր Բասմաջյանի հետ զրույցում նշել է դպրոցի հիմնադիր տնօրեն Միքայել Մինասյանը: Նա նաեւ հույս է հայտնել, որ Դավիթի օրինակը կխանդավառի մեր մյուս հանրահայտ մարզիկներին հայեցի կրթությանն ու դաստիարակությանը սատարելու գործում:**

# Ռաֆայել Մեհրաբյանը պաշտոնանկ արվեց

**Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի գործկոմի նիստում քննարկվել է մեր բռնցքամարտիկների ելույթը Բաքվում կայացած աշխարհի առաջնությունում: Ելույթը գնահատվեց անբավարար, քանի որ հավաքականը չէր կատարել իր առջեւ դրված խնդիրը՝ նվաճել առնվազն 3 օլիմպիական ուղեգիր: Մինչդեռ Բաքվում միայն Անդրանիկ Հակոբյանին (75 կգ) հաջողվեց օլիմպիական ուղեգիր նվաճել:**

**Հաշվի առնելով այս ամենը, ֆեդերացիայի գործկոմը որոշեց Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանին ազատել պաշտոնից: Նրա փոխարեն հավաքականը կգլխավորի վաստակավոր մարզիչ Կարեն Աղամալյանը, որին կօգնի նույնպես վաստակավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը:**

**Բռնցքամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականը կշարունակի գլխավորել Դերենիկ Ոսկանյանը: Ավագ տարիքի պատանեկան հավաքականը կղեկավարի Արման Հարությունյանը, իսկ կրտսեր տարիքինը՝ Արշավիր Գրիգորյանը:**

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը հաղթեց աշխարհի չեմպիոնին

Բիլբաոյում ավարտին է մոտենում շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարը: Նախավերջին՝ 9-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով հաղթեց աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդին: Տուրի կենտրոնական հանդիպումը երկու առաջատարների՝ Մագնուս Կառլսենի եւ Վասիլի Իվանչուկի մրցավեճն էր: Շահելով պարտիան, Կառլսենը վաստակեց 14 միավոր եւ հավասարվեց Իվանչուկին: Արոնյանն ու Նակամուրան ունեն 11-ական միավոր: Վերջինս պարտվեց Վալեխոյին, որը 2-րդ շրջանում արդեն երկրորդ հաղթանակը տոնեց ու վաստակեց 10 միավոր: 9 միավորով հետնապահի դերում հայտնվեց Անանդը:

«Մեծ սաղավարտի» հաղթողը կորոշվի ավարտական տուրում: Ուշադրության կենտրոնում կլինի Իվանչուկ-Արոնյանը պարտիան: Առաջին շրջանում Արոնյանը պարտվել էր: Կառլսենը սեւերով կխաղա Նակամուրայի հետ: Այս երկու պարտիաներն էլ կանվանեն մրցաշարի հաղթողին: Անանդի եւ Վալեխոյի մրցավեճում հայտնի կդառնա աղյուսակը եզրափակող շախմատիստը:

# Պատանի շաշկիստի մեծ հաջողությունը

Ռուսաստանի Սոչի քաղաքում անցկացված ռուսական շաշկու աշխարհի պատանեկան առաջնությունում հիանալի ելույթ ունեցավ Ալեքսանդր Գրիգորյանը՝ նվաճելով աշխարհի փոխչեմպիոնի տիտղոսը մինչեւ 10 տարեկանների մրցավեճում: Նշենք, որ ավելի վաղ Եվրոպայի պատանեկան առաջնությունում արծաթե մեդալի էր արժանացել Ռուբեն Պետրոսյանը: Շնորհալի երկու շաշկիստների մարզիչն է շաշկու Հայաստանի բազմակի չեմպիոն Նշան Ալավերդյանը:

Ալեքսանդր Գրիգորյանը շաշկու Հայաստանի չեմպիոնն է մինչեւ 12 տարեկանների մեջ, իսկ Ռուբեն Պետրոսյանը՝ փոխչեմպիոնը: Երկուսն էլ «Ուսում» հանրակրթական դպրոցի սաներ են:

# Մրցանակը հանձնեց Ռաֆայել Վահանյանը

Երեւանում անցկացվեց արագ շախմատի մրցաշար նվիրված հայ հռչակավոր գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանի ծննդյան 60-ամյակին: Այս մասին տեղեկացնում է armchess.am կայքը: Մրցաշարին մասնակցեցին 60 վետերան շախմատիստներ: Բոլորից հաջող հանդես եկավ միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը՝ 7 հնարավորից վաստակելով 6 միավոր: Հենց Ռաֆայել Վահանյանն էլ գլխավոր մրցանակը հանձնեց հաղթողին:

# Մասնագիտական դասընթաց ՀԱՕԿ-ի նախաձեռնությամբ



Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության ծառայությունից, «Օլիմպիական համերաշխություն» կազմակերպության ծրագրի շրջանակներում, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախաձեռնությամբ մեր երկրում իրականացվում է ազգային մարզական համակարգի զարգացման եռափուլ ծրագիր: Հերթական մարզաձեւը կանոեներով եւ բայդարկաներով թիավարությունն էր:

Երեւանում, Հրազդանում եւ Սեւանում կայացավ մասնագիտական երկրորդ դասընթացը՝ թիավարության մարզիչների համար (առաջինն անցկացվել էր հունիսին): Մասնակցեցին 20-ից ավելի մարզիչ-մանկավարժներ: Տեսագործնական պարապմունքները վարեց Ուկրաինայի բայդարկաներով եւ կանոեներով թիավարության ֆեդերացիայի փոխնախագահ, այդ երկրի հավաքականների գլխավոր համակարգող Ալեքսանդր Բականիչեւը: Նա համապատասխան գիտելիքներ հաղորդեց ունկնդիրներին, նրանց ծանոթացրեց մարզաձեւի նորություններին եւ փոփոխություններին:

Նոյեմբերին Հրազդանում եւ Ծաղկաձորում նախատեսված է անցկացնել երրորդ փուլը: Դասընթացին զուգահեռ Հայաստանի հավաքականի համար, Ա. Բականիչեւի գլխավորությամբ կանցկացվի ուսումնամարզական հավաք:

Ծրագրի ղեկավար, ՀԱՕԿ-ի բաժնի վարիչ Գաբրիել Ղազարյանն ասաց, որ բաժինը ուկրաինացի մասնագետի հետ մշակել է Հայաստանում թիավարության զարգացման հեռանկարային ծրագիր: Այն իր մեջ ներառում է նաեւ ուսումնամարզական համատեղ հավաքներ մարզաձեւում մեծ համարում ունեցող առաջատար երկրների մարզիկների հետ: Առաջին հավաքը նշանակված է հոկտեմբերին՝ Կիեւում: Հայաստանի թիավարները նաեւ հատուկ սարքավորումներով խորացված բժշկական մասնագիտական հետազոտության կենթարկվեն:

ՀԱՕԿ-ը շարունակում է աշխատանքները նաեւ մյուս մարզաձեւերի համար՝ նման երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Գինու եւ կոնյակի արտահանում. Հայաստանը տարածաշրջանում կորցնում է իր դիրքերը

Հայաստանն անվանում են կոնյակի երկիր, ինչի պատճառով գինին զրկվում է անհրաժեշտ ուշադրությունից: Մինչդեռ գինեգործները կանխագուշակում են, որ ապագայում հայկական կոնյակի սպառումը երեք անգամ նվազելու է: Պատճառներից մեկն էլ այն է, որ բազմաթիվ երկրների օրինակով հայկական կոնյակը կանվանվի բրենդի ու կկորցնի իր նշանակությունն ու համբավը: Եթե աշխարհը ճանաչում է «Հայկական կոնյակ» բրենդը, «Հայկական գինի» բրենդով անհնար է որեւէ մեկին զարմացնել:

Գինեգործների միության նախագահի **Ավագ Հարությունյանի** գնահատմամբ՝ 10 եւ ավելի եվրո արժողությամբ գինիների ցուցակում հայկական գինին մրցունակ չէ եւ ներկայիս պայմաններում չի էլ կարող լինել, 1-2 եվրո արժողությամբ գինիների համեմատությամբ հայկական արտադրանքի որակը շատ բարձր է, 3-4 եվրո արժողությամբ գինիների համեմատությամբ մրցունակ ենք, իսկ 5-10 եվրոյի սահմանը միշտ չէ, որ կարողանում ենք հաղթահարել: Դա կախված է արտադրանքից, որակից: Գինի օգտագործող 70 երկրների ցանկում Հայաստանը զբաղեցնում է 64-րդ հորիզոնականը: Սա այն համատեքստում, որ գինեգործության հնագույն օրրաններից մեկը՝ Արենին, գտնվում է Հայաստանում: Մինչդեռ ալկոհոլ օգտագործող երկրների ցանկում Հայաստանը լավագույն եռյակում է: Մեր հանրապետությունում մեկ շնչին բաժին է հասնում 16 լիտր ալկոհոլ: Առաջին 9 ամսվա տվյալներով՝ Հայաստանում նկատվել է օղու սպառման նվազում 10 տոկոսով, կոնյակի եւ գինու սպառումը նվազել է 5 տոկոսով:

Ի տարբերություն վերջին 10-12 տարվա, այս տարի խաղողի մթերման ժամանակ թելադրողը ոչ թե գինեգործն էր, այլ գյուղացին: Հարությունյանի գնահատմամբ՝ այս տարի զգացվեց խաղողի պահանջարկի աճ՝ մթերվել է 110.000 տոննա խաղող:

Ավագ Հարությունյանի մեկնաբանությամբ՝ վատ գինի ունենք կոնյակի պատճառով: «Կոնյակի համար պետք է խաղողի շաքարայնությունը կազմի 17-20 տոկոս, գինու համար պետք է տատանվի 21-21.5 տոկոսի հատվածում: 90 տոկոս խաղողը գնում է կոնյակի արտադրության, քանի որ գյուղացին չի կարող 10 տոկոս խաղողը պահել մինչեւ լավ հասնելը, նույն ժամանակահատվածում մնացած խաղողը վաճառում է գինեգործին: Ստեղծվում է աբսուրդային իրավիճակը, երբ գյուղացին ե՛ւ տուժում է, ե՛ւ շահում: Նա շահում է, որովհետեւ խաղողը ամբողջությամբ է մթերում, սակայն տուժում է, որովհետեւ ցածր շաքարայնության պարագայում գործարանը ցածր սակագին է սահմանում», երեկ ասաց Հարությունյանը «Հայելի»-ում:

Ավագ Հարությունյանի փոխանցմամբ՝ հայկական գինու ամենամեծ մրցակիցը գարեջուրն է: Ըստ վիճակագրական տվյալների՝ այսօր Հայաստանում հինգ անգամ շատ են գարեջուր խմում, քան գինի: Գինու եւ գարեջրի մրցակցության համար պետությունը ստեղծել է անհավասար պայմաններ: «Երկուսն էլ ենթաակցիզային ապրանքներ են, սակայն եթե գինու վրա ակցիզ է դրոշմվում, ապա գարեջրի շշին չի դրոշմվում: Առաջանում է «ստվեր»: Նման իրավիճակը հարկայինում բացատրում են հանգամանքով, որ շատ դժվար է գարեջրի շշի վրա ակցիզ դրոշմելը, մինչդեռ գարեջրի շշերի քանակությամբ էլ կոնյակ է արտադրվում, որը ակցիզավորվում է: Եթե գարեջուրը թույլատրվում է լիտրով վաճառել, ապա գինին լիտրով վաճառելու իրավունք չկա»: Ավագ Հարությունյանը համոզված է՝ պետության նման գործելակերպը հատուկ միտում ունի. չեն ուզում, որ գարեջուրը «ստվերից» դուրս գա, որպեսզի չնեղացնեն գարեջուր արտադրողներին:

Գինու մասնավոր ֆրանսահայ **Սերժ Ղուկասյանի** գնահատմամբ՝ հայկական գինին վատը չէ, ճիշտ սպառման պարագայում կարող է նաեւ մրցունակ լինել: «Որակով հայկական գինին չի զիջում արգենտինական կամ չիլիական գինուն», ասում է նա՝ խորհուրդ տալով լուրջ ուշադրություն դարձնել ոչ միայն որակին, այլեւ գովազդին:

Ոչ միայն գինու, այլեւ կոնյակի արտահանմամբ տարածաշրջանում Հայաստանը կորցնում է իր դիրքերը: Ադրբեջանական գինի հասկացություն չկա եւ երբեք էլ չի եղել, սակայն նրանք այսօր զարգացնում են ադրբեջանական կոնյակը: Ռուսական շուկայում այսօր առաջատար դիրք է գրավում ադրբեջանական կոնյակը, հայկականը երկրորդ պլանում է: Սա այն պարագայում, երբ Ադրբեջանը կոնյակի արտադրության համար անհրաժեշտ խաղողի պաշար չունի: Ադրբեջանցիները Իրանից ներմուծում են չամիչ եւ տեղում ստանում կոնյակ: Մինչ վրաց-ռուսական պատերազմը վրացական գինին հիմնականում արտահանվում էր ռուսական շուկա, սակայն ռուսական շուկայի փակվելուց Վրաստանը գիտակցեց, որ պետք է իր արտադրանքի համար նոր շուկա գտնի, եւ բարձրացրեց որակը: Հայաստանում արտադրվող եւ արտահանվող գինու առյուծի բաժինը՝ 72 տոկոսը, արտահանվում է Ռուսաստան եւ ԱՊՀ երկրներ, մնացածը՝ ԵՄ եւ ԱՄՆ: Հայկական գինին հիմնականում գնում են սփյուռքահայերը: Դա ե՛ւ բացասական, ե՛ւ դրական նշանակություն ունի: Դրական, որովհետեւ սպառվում է, բացասական, որովհետեւ գինեգործները ուշադրություն չեն դարձնում որակին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Իր լարած ծուղակն է ընկել

*1-ին էջից*

Հանդես գալով «Անվտանգությունը փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակում. Կովկասյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական կայունությունը» թեմայով «միջազգային» գիտաժողովում, Ադրբեջանի ԱԳՆ անվտանգության վարչության երկրորդ քարտուղար Էլչին Հուսեյինլին ասել է. «Ցավոք սրտի, «հայ-ադրբեջանական հակամարտության» (չակերտները մերն են-Վ.Ա.) կարգավորմամբ զբաղվող միջազգային միջնորդները՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն օգնելու փոխարեն դրա արհեստական երկարաձգման հնարավորություն են ստեղծում: Նրանք չեն կարողանում իրականացնել իրենց վրա դրված առաքելությունը, ներդրում չեն անում հակամարտության կարգավորման գործընթացում: Դա անթույլատրելի է»:

Այստեղ ակնհայտորեն զգացվում է համանախագահների վերջին հայտարարությունից ադրբեջանական կողմի հիասթափվածությունը: Տեւական ընդմիջումից հետո միջնորդները վերստին հաստատել են, որ ղարաբաղյան կարգավորման մեթոդաբանությունը նույնն է մնում, ինչպես եւ՝ սկզբունքները: Իսկ դա հավասարազոր է նրան, որ ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ Ֆրանսիան մերժում են Իլհամ Ալիեւի «մոտ մեկ տասնյակ նոր առաջարկությունները»:

Կարգավորման բանակցային գործընթացի նույնիսկ թռուցիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ ամեն անգամ, երբ Ադրբեջանը մերժել է միջնորդների առաջարկությունները, ապա հետեւել են նորերը, որոնք գոնե տեսական ձեւակերպումներով ավելի մոտ են խնդրի լուծման հայկական կողմի ընկալումներին: Այս նրբությունն, ամենայն հավանականությամբ, դիտարկված է նաեւ Ադրբեջանում: Իսկ քանի որ միջնորդները, ինչպես իրենք են ասում, «նոր ոչինչ հայտնագործել չեն կարող», ապա Իլհամ Ալիեւին մնում է սեփական նախաձեռնությամբ հրաժարվել «նոր առաջարկություններից» եւ նախկին տրամաբանությամբ շարունակել բանակցությունները՝ լինեն դրանք Մոսկվայի, թե Փարիզի կամ Վաշինգտոնի անմիջական հովանու ներքո:

Այլընտրանքը ԼՂՀ փաստացի անկախության ճանաչումն է: Իսկ գուցե սեփական ձեռքով լարած ծուղակից դուրս գալու համար Իլհամ Ալիեւն էլ դրա՞ն է սպասում: Քանի որ այդ դեպքում է միայն հնարավոր, որ նա դեմք փրկի:

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# Ընդերքի նպատակային հետազոտումը կամրապնդի տնտեսական ներուժը

**Ըստ երկրաբանական ուսումնասիրությունների, Արցախի տարածքում կան 7 հանքավայր եւ 27 խոշոր երեւակում: Անցյալ շաբաթավերջին Ստեփանակերտում կայացած «ԼՂՀ երկրաբանությունը եւ հանքային պաշարները» թեմայով գիտաժողովում այս տվյալները ներկայացրել է ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ԽՍՀՄ երկրաբանության վերջին նախարար, ԼՂՀ նախագահի խորհրդական Գրիգորի Գաբրիելյանցը: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մյուսների իրական հնարավորությունները սկզբնական տեղեկությունների հետ անհամադրելի են: Այսօր Արցախում շահագործվող Դրմբոնի հանքավայրը միջազգային չափանիշներով շատ ավելի նվազ է, քան ակնկալվում է, մասնավորապես նավթի, գազի, քարածխի, քրոմի, կապարի, ցինկի ու սնդիկի հանքավայրերից:**

**Արցախում նման ձեւաչափով գիտագործնական կոնֆերանս առաջին անգամ էր անցկացվում, որի նպատակը, ինչպես նշեց կոնֆերանսը վարող՝ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը, Ղարաբաղի երկրաբանության ու հանքային պաշարների հնարավորությունները տեսական եւ գործնական բացահայտումների բերելն է:**

**Իսկ ուշագրավ առաջարկներ եղան: Գ. Գաբրիելյանցի մոտեցումն, օրինակ, այն էր, որ անհրաժեշտ է գիտահետազոտական աշխատանքները կազմակերպել պետական մակարդակով, շահագործման իրավունքն էլ պետք է տրամադրվի ընկերություններին: «Մենք չպետք է ներդրողների հետ խոսենք այն մասին, ինչ ունենք: Մենք պետք է խոսենք դրանց արժեքի մասին: Ներդրողների հետ հարաբերությունները պետք է կառուցենք տեխնիկատնտեսական դրույթների, նկատառումների, հիմնավորումների մակարդակի վրա», ասել է նա: Գիտնականը միաժամանակ անդրադարձել է արդյունահանման եւ հետախուզական աշխատանքներ իրականացնող «Բեյզ մեթըլս» ընկերության մենաշնորհային կարգավիճակին, որի առնչությամբ հիշյալ ընկերության տնօրեն Արթուր Մկրտումյանը հայտարարեց, որ իրենք պատրաստ են նոր ներդրողներին աջակցել՝ ներգրավելով ունեցած հետախուզական ու լաբորատոր ենթակառուցվածքները:**

**Ակադեմիկոս Ռուբեն Ջրբաշյանը, խոսելով Արցախի ջրային պաշարների մասին, մատնանշել է դրա տնտեսական ու քաղաքական նշանակութունը: Լրացնելով ակադեմիկոսին, Երեւանի ճարտարապետության եւ շինարարության համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանն առաջարկել է լուրջ ուշադրություն դարձնել ջրային պաշարների օգտագործմանը ոչ միայն ներքին պահանջների բավարարման, այլեւ արտահանման նպատակով: «Ջուրը թելադրելու է ապագայի պետության ուժեղ լինելը: Ով ունենալու է ջուր, նա ստեղծելու է ուժեղ պետություն», այսպիսի տեսակետ է հայտնել նա:**

**ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանն Արցախի ընդերքի նպատակային հետազոտումը կապել է հանրապետության տնտեսական ներուժի ամրապնդման հետ, շեշտելով, որ հանքային ռեսուրսների օգտագործումն Արցախում կապահովի սոցիալ-տնտեսական կայուն աճ:**



**Ամփոփելով կոնֆերանսի աշխատանքները, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը նշել է, որ Արցախի հանքային պաշարների ուսումնասիրությունը մեծ տեղ է գրավում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Նա կարեւորել է Հայաստանի ու Սփյուռքի գիտական ներուժի ներգրավումը, ինչը կնպաստի հանրապետության երկրաբանության հանքային պաշարների հետազոտմանն ու արդյունահանմանը: Արցախում երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնող մասնագետների համար անպայման կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ: Իսկ ընդերքօգտագործման բնագավառում պետական քաղաքականությունն իր արտացոլումը կգտնի 2012թ. պետբյուջեում, հավաստիացրել է ԼՂՀ նախագահը:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՊՁԲ -2/11**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին(մասնակիցներին), սահմանված կարգով կառաջարկվի կնքել տրասպահմանյան արտադրության մարդատար ծառայողական ավտոմեքենայի գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) պայմանով, որ պայմանագիրն ուժի մեջ կմտնի համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում:

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար տրասպահմանյան արտադրության մարդատար ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի մասնագետ Ա. Խաչատրյանին (հեռ. 010 511-787) մինչև 19.10.2011 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝11.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: